


# Մ Ի Օ Մ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՊԳԸՅԻՆ • ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ • ԳԻԸԳԻՏԸԿԸՆ  
ԵՒ ՔԸԴԸՔԸԿԸՆ

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ  
ՇՐՋԱՆ ՄԻԸՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1870

ՎՄԻՆ . Տ . Տ . ՄԳՐՏԻՉ Արքայան Պատրիարք :

Գեղ . Կարապետ Արքեպիսկոպոս :

Գեղ . Արխատիկ Էպիսկոպոս :

Ն . Յովհաննէս Էպիսկոպոս Սեփեան :

Ն . Խորեն Էպիսկոպոս Նարայէական :

Արժ . Խորեն վար . փոխ . Երուսաղէմաւոս :

Ն . Գարեգին վարդապետ Թաթարեան :

Ն . Յովհաննէս վարդապետ Ղալաթիոյ :

Տ . Գրիգոր քահանայ Վեշէկեան :

Տ . Սուքրիան քահ . Մայր Եկեղեցւոյ աւագ լուսարար :

Աւերակեան մահտեօի Յովհաննէս աղա :

Ազոնեան Սկրտիչ և Կարապետ աղայք :

Աշնանեան Պօղոս և Ֆենտի :

Ազոս Սահակ և Ֆենտի :

Աւարելեանց Մարգար և Մարտիրոս աղայք :

Աղայեան մահտեօի Սարգիս աղա :

Արթինոֆ Անտօն աղա :

Արղանեան Ստեփան Վէյ :

Բարաղաման Յարսապի աղա :

Բարսեղեան Ստեփան աղա :

Գարբիէլեան Մկրտիչ աղա :

Գայրազեան Հանիկ աղա :

Գալուստեան Ղազարոս աղա :

Գայեղրեան Յարութիւն աղա :

Գապրուսեան մահտեօի Գաբրիէլ աղա :

Գարակեօրեան Յովհաննէս աղա :

Գարակեօրեան Մկրայէլ աղա :

Գափամաճեան Գեորգ աղա . ( 2 օրի . ) :

Գափամաճեան Յարութիւն աղա :

Գափամաճեան Նազարէթ աղա :

Գափամաճեան Համարձուժ աղա :

Գափամաճեան Յովսէփ աղա :

Գրիգորեան Սիմօնիկ աղա :

Եաղմաճեան Աւետիս աղա :

Եղջարղեան Պօղոս աղա :

Երանեակ վարժուհի Սերփիլեան :

Եօրտամեան Կարապետ աղա . ( 2 օրի . ) :

Զարդարեան Գեորգ աղա Կեսարացի :

Էամբրեան Գալուստ աղա :

Թագարեան մահտեօի Խուբէն աղա :

Թագարեան Վրժանեան աղա ժամայորժ :

Թաշի պաշի Յարութիւնեան Աւարել աղա :

Թաշի պաշի Վարդանեան Տաքեան աղա :

Իֆրայիմեան Ասատր աղա :

Իարայէլեան Ստեփան աղա :

Իւթիւնեան Կարապետ աղա :

Իւղարեղեան Նազարէթ աղա :

Խաչատուրեան Գ . մահտեօի Գաբրիէլ աղա :

Խաչատուրեան Մկրտիչ աղա :

Խարբերդցի Յարութիւն աղա Ստանլեան :

Կիւլպենկեան Արէլ աղա :

Կիւլպենկեան մահտեօի Կիւլպենկ աղա :

Կիւլպենկեան Կիւլպենկ աղա Կեսարացի :

Կիւլպենկեան մահտեօի Սերբէլ աղա :

Կիւլպենկեան Համարձուժ աղա Կեսարացի :

Կիւլպենկեան Յովհաննէս աղա :

Կիւլպենկեան Սահակ աղա :

Համեան Խիկենտեր աղա :

Համամեան Սարգիս և Ֆենտի :

Հարեց Բօհան աղա :

Հարեց մահտեօի Արարամ աղա :

Հիւնքեար պէլեանեան Սողոմոն և Ֆենտի :

Ղազարոսեան մահտեօի Խաչիկ աղա :

Ղազարոսեան Քրիստոստուր աղա :

Ղազարոսեան Սահակ աղա :

Մագուրեան մահտեօի Սարգիս աղա :

Մալմառեան մահտեօի Սարգիս ԽաղՅա :

Մանուկեան Մանուկ աղա :

Մանուկեան Յովհաննէս աղա Կեսարացի :

Մանուկեան Սենթրիփ աղա :

Միխիթարեան Միարատութիւն Ի Վենետիկ :

Միխիթարեան Միարատութիւն Ի Վիեննա :

Միսակեան Խաչատուր աղա :

Միսաքեան Վարդերս աղա :

Միքայէլեան Սամուէլ աղա :

Միւսպահեան Մանուկ աղա . ( 2 օրինակ ) :

Մոսիկեան Եակօբ աղա :

Մովսէս աղա աղաւանդի Աճեմեան Վանեցի :

Մուրատեան Գեորգ աղա :

Եակօբեան Պօղոս աղա :

Եակօբեան Կարապետ աղա :

Նաթանեան մահտեօի Համարձուժ աղա :

Ներսէսեան Գրիգոր աղա :

Նիկողոսեան Պետրոս աղա :

Նորատունկեան մահտեօի Գրիգոր աղա . ( 2 օրի . ) :

Նորատունկեան Եակօբ և Ֆենտի . ( 2 օրի . ) :

Նորատունկեան Սիմօնիկ աղա . ( 2 օրի . ) :

Շահաւետեանց ընկերութիւն Սեբաստիոյ :

Շահաւետեան Աւետիս աղա :

Ոսկերիչ Սարգիս աղա :

Չամբէրժէնեան Գրիգոր աղա :

Չայեան Պաղտատար աղա Բինկեանցի :

Չայեան Մկրտիչ աղա Բինկեանցի :

Չրաճեան Սարգիս աղա :

Չրաքեան Մեղքեան աղա Արապկերցի :

Չօրնքեան Մանուկ աղա :

Չօղանեան Ղազարոս աղա :

Պաղեան Սարգիս Վէյ :

Պաղեան Անտօնիկ Պէյ :

Պաղեան Եակօբ Վէյ :

Պախուկեան մահտեօի Խաչատուր աղա :

Պարտիզպանեան Աւետիս աղա :

Պէլլերեան Խարտի Վէյ :

Պէլլերեան Սարգիս աղա :

Պէլլերեան Միքայէլ աղա :

Պեօշեանց Գեորգ աղա :

Պօշանեան Սարգիս աղա :

Պղաճեան Սիմօն աղա :

Սագայեան Աւերսան աղա . ( 2 օրինակ ) :

Սանուց ընկերութիւն Էթիզու :

Սարրաֆ Եակօբ աղա :

Սերոբեան Տարթօր և Ֆենտի :

Սերոբեան Յարութիւն աղա :

Սեփեան Կալան և Ֆենտի :

Սմբատեան Յարութիւն աղա :

Սուլախանլեան Նիկողոս աղա :

Սուրենեան Յովհաննէս և Ֆենտի :

Ստամբուղեան Կարապետ և Բարսեղ աղայք :

Ստեփանեան մահտեօի Մկրտիչ աղա :

Վարդանեան Արարամ աղա :

Վարժապետեան Գրիգոր աղա :

Տամաթեան Եակօբ աղա :

Տամրամեան Արարամ աղա :

Տատեան Յ . Աւարել և Ֆենտի :

Տատեան Պ . Աւարել և Ֆենտի :

Տատեան Պ . Սկրտիչ Պէյ :

Տատեան Յ . Ներսէս և Ֆենտի :

Տատեան Պ . Նուրէ օրիորդ :

Տատեան Պ . Սիմօն Պէյ :

Տերպեց պատուելի Յովհաննէս աղա :

Տօղրամաճի պաշի մահտեօի Գաբրիէլ աղա քեմա .

Տեան .


Տօնելեան Եակօբ և Ֆենտի :

Րեւիմի պաշի մահտեօի Մկրտիչ աղա :

Փանտեան Գեորգ աղա :

Փափաղեան Գեորգ և Ֆենտի . ( 2 օրի . ) :

Փէշարմաճեան մահտեօի Միքայէլ աղա :



ՀԻՆԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ  
ԹԻՒ 2.

Մ Մ Ս Ա Գ Ի Ր

ՓԵՏՐՎԱՐ 28.  
1870.

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Բ. Ա. Ն. Ա. Ս. Ի. Բ. Ա. Կ. Ա. Ն. ԵՒ Գ. Բ. Ա. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Կ Ր Յ Ն Ա Կ Ա Ն Ք

ՄԻՕՆԻ արգոյ բաժանորդները կը փախադէին անշուշտ որ Միօնի էջերը պարունակեն կրօնի և հաւատոց վե. բարբերեալ խնդրոց վրայ եւս : Կհաւատիկ բաժանորդացս սոյն փախաբը կը փութամք լեցնել այսօր կրօնի վե. բարբերեալ հարկաւոր խնդրոց մը վրայ խօսիլ սկսելով : Այս հարկաւոր խընդիրը բողոքովիննոր չէ ըստ որում 1864ի վերջերն ծագումն առնելով դեռ վեր. ջացած չէ . այսինքն իւր լուծումն չառաւ ըստ իւր հեղինակին փափաքանոց . (Թէ ինչո՞ւ վարդապետները չեն պատասխաներ :

Այս հարկաւոր խնդիրն ուրիշ բան չէ . եթէ ոչ հռովմէադաւան հայոց մեր հայոցս ունեցած դաւանութեանց վրայ ունեցած նայեցուածքը

Հինական դարբերութիւնս անուանեալ հերքել : Սա այս տարբերութիւնները գտած է այսօր Վիեննայի Միօնի Բեան միաբաններէն Հ. Յ. Գ. (Հայր Յովսէփ Վաթըրմանն) . որոնք այն կը տարբերեն Հայոց եկեղեցին Հռովմայ եկեղեցիէն . սակայն հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյն ուղիղ դաւանութիւնն ալ կը հաստատեն :

Գրքիս հեղինակը մէջ բերելով Հռովմէական եկեղեցւոյ ինչ ինչ դաւանութիւնները , և Հայոց քանի մը մանր բրիտաննէականները , ասոնց մէջէն տարբերութիւններ կը հանէ ըսելով որ Հայոց եկեղեցին այն կէտերու մէջ յանչափօ հեռացեր է Հռովմայ եկեղեցիէն , որն որ ամէն եկեղեցիներէ աւելի մօտ է եղեր Հռովմայ եկեղեց.

ւոյն : (Արովհետեւ Հայոց եկեղեցին  
ուղղափառ է ուստի և ուղղափառ ե-  
կեղեցեաց մտաւոյն է . իսկ Հռովմայ  
եկեղեցին փոխած է ուղղափառութե-  
ծէսերը . ուստի Հայոց եկեղեցին ալ  
հեռագոյն է հռովմայ եկեղեցւոյն) :

Սեղ համար հետաքրքրական չէ  
գիտնալ թէ մեր եկեղեցին հռովմայ  
եկեղեցւոյն մօտ է կամ հեռու . եւ  
թէ այնպէս կը կարծեն եղեր . սակայն  
սա գիտեմք որ մեր եկեղեցին ՚ի սկզբ-  
բանէ և այս օր և է եկեղեցիէ ան-  
կախ առաքելական եկեղեցի է . թա-  
ղէոս Ս . Առաքեալէն և Աբգարու օ-  
րերէն սկսեալ : Եւ այս ամենէն՝ քաջ  
գիտնալու է Հռովմայ եկեղեցին թէ  
Հայաստանեայց Առաքելական եկեղե-  
ցին Քրիստոսի Տեառն մերոյ՝ անուամբ  
բնն հիմնեալ և անկախ է ուրիշ որ և  
է գլուխներէ իւր կաթուղիկեու-  
թեան գլուխն զՔրիստոս միայն գիտ-  
նալով : Չընդունիր ամենեւին դաւա-  
նութիւն՝ այս Հռովմին կամ Յայնին  
ընդունածն է ըսելով . այլ կ'ընդունի  
որ եւ է դաւանութիւն այս ուղիղ է  
ըսելով :

Թող Հռովմայ և Յունաց եկե-  
ղեցիները սուրբ ժողովոց կարգն  
ընդունին Քաղկեդոնի ժողովը : Հա-  
յաստանեայց ուղղափառ և ոչ հռով-  
մէական եկեղեցին մերժելով կը մերժէ  
դայն ժողովոց շարքէն դուրս . վասն զի  
ուղղութեան մէջ չունեներ դայն . վա-  
սնն զի սոյն ժողովին մէջ Աստուծոյ  
հոգին չէր խօսողը . այլ մարդոց կիրքը  
թողեալ զաստուծոյան զմարդկան խոր-  
հին . (երթ յետս իմ սասանայ . զի ոչ  
խորհիս զաստուծոյան այլ զմարդկան) :  
Կը գումարուի ժողովը և խնդիր մը կը  
սկսի քննել թէ առաջին բաղմոցն Յայ-  
նը պիտի նստի թէ Հռովմայեցին :

Հայաստանեայց ուղղափառ եկե-  
ղեցին անկախ ըլլալով ազատ է սուրբ

ժողովոց կարգը չընդունելու Քաղկե-  
դոնի ժողովը : Վասն զի իւր գործը  
սուրբ ժողովի գործ չէր . և անունը  
տիեզերական սուրբ ժողով ըլլալով .  
մէջ տեղը յունական և հռովմէական  
կիրքերը գահ յափշտակելու համար  
կը կրուուէին :

Հայաստանեայց ուղղափառ Ս .  
եկեղեցին իւր անկախ գործերով և  
ուղղակի աստուածաբաշտութեամբը  
յայտնի ըրած է ամեն քրիստանեայ ե-  
կեղեցիներու թէ ինքը տաճարացեալ  
է Աստուծոյ հոգւով և ճշմարտու-  
թեամբ միայն երկրպագելով : « Հոգի  
է Աստուած և՛ երկրպագուաց նորա  
հոգւով և ճշմարտութեամբ պարտ է  
երկրպագանել » :

Թող Հռովմայեցին և հռովմէա-  
դաւանք երկրպագեն ՚ի հռովմ Պապե-  
րու օրինօք . Յոյն երկրպագէ ՚ի սօ-  
լիս և յայլուր իւր Պատրիարքաց օրի-  
նօք : Հայը երկրպագեց և պիտի երկր-  
պագէ դարձեալ եւ ՚ի Հայաստան ՚ի  
ստորոտս Վասեաց եւ յայլ ամենայնու-  
րէք հոգւով և ճշմարտութեամբ իւր  
առաքելականդ եկեղեցւոյ օրինացն  
հետեւելով :

Հռովմէադաւան հայոց այս տե-  
սակ անդադար և շարժազփ աստուա-  
ծաբանութեանցն արդէն շատ անգամ  
ընտիր և կատարեալ պատասխան տը-  
ուած է հայաստանեայց Ս . եկեղե-  
ցին : Սակայն որովհետեւ զըպարտողին  
լուել և իւր սխալը կամ դժգոհութե-  
թիւնն յետս կոչելը բնութեան մէջ  
երեւցած չէ . և կամ խիտ չափաւոր  
պիտի գանձեմք հնոց մէջ ալ պատահած  
այսպէս . ուստի ինչպէս ալ որ հայաս-  
տանեայց ուղղափառ եկեղեցին նոցա  
պատասխանէ . դարձեալ նոքա պիտի  
չընեն : Արպէս զի վերջին խօսքն իրենք  
խօսած ըլլալով ռամկին կամ թէ (ըստ  
իւրեանց մտայ) իգտական սեռին կար-

Տեղիներն թէ թող թեցին Հայոց, և ցոյց տուին նոցա հերիտիկառութիւնը . ս. թնք եւս իրենց դէմ պատասխան չը գրանելով լռութեամբ ընդունեցին :

Հռովմեագրական ազգայիններէն ճշմարտութիւնն հասկնալով ոմանք եղբարք որոնք միշտ ընդունած են և ճանաչած հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ աւարեւականութիւնը և նորա գաւանդութեանց ճշմարտութիւնը, թող չցուին և չկործեն որ զիրենք ՚ի շարս սամիլին կը դասենք մեր խօսքին ընթացիցը մէջ . այլ կը ճանաչենք որ իրենք ոչ միայն զգայարանքներ ունին զգայիլցոր տեսներու, այլ եւ ճշմարտութեան իմանալի ըստ հասկնալու իմացումն ունենալինն եւս կ'ընդունինք :

Այս խօսքերնիս ալ թող չհպարտացուցանէ պատպառական գաթըր ձեանի պէս Հայ Աստուածաբանները (չողփազփները եւս պիտի բռնմ) թէ այս ճշմարտութիւնը ճանաչող մարդիկն ինչու ՚ի նոր Աիտն հեթանոսաց այսինքն ՚ի հռովմ կ'երկրպագեն միայն, և անկէջ դուրս փրկութիւն չըլլալ գիտեն . ասոնք ինչո՞ւ կ'արհամարհեն հապա օտար եկեղեցիները որոնք արտաքս : հռովմայ են, ինչո՞ւ հայոց հետ խօսակցելուն համար խոստովանահօր դրամ ապաշխարանքն ամենայն սիրով կը տանին . արդարանալու և հողըր գութեան արժանանալու համար :

Ասոր հաւատսին որ շատ անգամ արատանուած է գիտուն բերաններէ, կը կրկնեմք դարձեալ որ իրենց կանանայն նախասրջարոււմը միայն եղած է . ՚հատ որում իգական սեռի սկզբունքը փոխել ամենադժուար է . և արակա՛նաց ալ առ իգականս ունեցած սէրը կ'առաւելու միշտ իգականաց առ արականս ունեցած սէրէն, ուստի հերկք է որ անգամ մը իգական սեռը խարուած է այս տգէտ կամ խարերաց

աստուածաբաններուն (պատպառական Հայ աստուածաբանները ինչպէս Վաթրըձեանն ու իր ընկերները, որոնք Պոլսոյ մէջ հասունեանի հովանաւորութեանը տակ Աստուածաբանից ժողով մը կը կազմեն և շեն գիտեր և շեն հասկնար Աւետարանի խօսքերը և կամ շեն ուղեր հասկնալ . վստն զի կամ տգէտ են որ իրենց սխալը կը պնդեն և կամ խարերայ են . այսինքն գիտցանուեն հակառակը, և որ տեսակ ընթացք որ իրենց շահուն գայ, զայն ՚ի գործ կը դնեն . ինչպէս է Հայոց ժողովուրդէն մաս մը բաժնելով և անոնց վրայ հռովմայ անունն աւելցնելով առանձին ժողովուրդ մը կազմելու ջանալին . որպէս զի կեղեքեն ոյն անմը առնչ ժողովուրդն համարձակ առանց հարցանող մ' ունենալու : ) այնուհետեւ ՚ի հարկէն է արանց ալ կանանայն հետեւումը, ինչպէս որ Սողոմոն անգամ լւրանգուգական խմաստութեամբ ըն հանդերձ պատրեցա . իւր սիրած կինէն : Աւ կնոջ այս խարեութիւնն ՚ի սկզբանէ բլրողուն փնասն առհասարակ մարդկութիւնը կրեց . Արուն վերայ խօսիլ անգամ հարկ չէ, այնչափ քաջ գիտեն ամեն մարդիկ :

Ասոր ապացոյց մ' ալ որ այս տեղ պիտի դնեմք, կարծեմք թէ աւելի սիրով պիտի ընդունուի . և համողիչ ալ պիտի ըլլայ անոնց որոնց որ կը խօսինք . թէ իրենց ընթացքը միշտ խարերայութեան եղած է :

Անկէջ քառասուն տարւոյ չափ յառաջները այս պատպառական հայ վարդապետներէն ոմանք, որոնք աւելի սաստկութեամբ վառուած են եղեր հռովմայ օրհնութեանց և ներողութեանց տաչորիչ հրովր, մտած են կանանց սեռի մէջ և զանոնք այնպէս խարեր են որ իրենք չէին հաւատար և կարծեր թէ այնչափ յաջողէին, և ի՞նչ

է այս յաջողութիւնը . սորա կը տրա-  
մարանեն անմիտ կանանւոյն ըսելով .  
հերետիկոսներն Մատուծոյ տեսութե-  
նէն մերժեալ են . Պապին աշխարհի վը-  
րայ Մատուծոյ փոխանորդ և հռովմայ  
կաթուղիկէ եկեղեցւոյ գլուխ ըլլալը  
չնդունող ու չհաւատացող ազգերը  
թէեւ բրիտոնեաց ալ ըլլան և հին և  
նոր կողակարանաց պատուիրած ամէն  
օրէնքներն ու պատուիրանները կատա-  
րեն , դարձեալ հերետիկոս են , և Մա-  
տուծոյ տեսութենէն մերժեալ . վասն  
զի արտաքոյ հռովմայ չիք փրկութիւն .

Ինչպէս որ հրէից սրբութեան օ-  
րէնքը կը պատուիրէր որ այլազգեաց  
հետ յարաբերութիւն չընեն , նոյն-  
պէս կը պատուիրէ ճշմարտութեամբ  
հռովմէական կաթուղիկէ ( կարծե-  
ցեալ ) Արեւելոյն ալ հաւատացելոց որ  
հերետիկոսաց և հերձուածողաց հետ  
հաղորդակցութի կամ յարաբերութի  
չունենան . իւր ժողովոդեան կը սորվե-  
ցնէ թէ ' Հայոց ' ազգը հրետիկոսէ ,  
վասն զի կաթուղիկէ Արեւելոյ գը-  
լուխ զՔրիստոս կ'ընդունի և ոչ ըզ  
Պապ , վասն զի Հռովմէն դուրս ուր  
որըլայ Մատուծոյ օրհնութիւն կ'եր-  
գէ և կ'երկրպագէ : Ուստի և դուք  
սրբուհիք , Սուրբ Մատուածածնի որ  
դեգրեցեալքդ պէտք էք իբրեւ ի սա-  
տանայէ խորշիլ երբ հայ մը տեսնէք .  
ամենեւին բարեւ չտայք ու չառնէք .  
եթէ Չեր զաւակներն ու փեսայներն  
ալ երբէք այս տեսակ հաղորդու-  
թիւն մ' ունենան անոնց հետ ,  
մեղքը ձեր վիզն է . և դուք պիտի  
քաշէք անոնց բաժին դժոխոց տան-  
ջանքն ալ վասն զի աստուածսպաշտու-  
թիւնը մայրերուն պարտաւորութիւ-  
նն է սորվեցունել իրենց մանկանց .  
և երբ չզուշանան զարիւն նոցա ՚ի  
ձեռաց ձերոց ինդրեցից կ'ըսէ մար-  
գարէին բերանով :

Դուք զձեզ պարտաւոր կե-  
ցունելու չէք . բանի որ ձեռքերնիդ  
ժամանակ ունիք աշխարհի մէջ . ըզ-  
գուշացուցէք զանոնք ալ միանգամայն  
հերետիկոսաց տեսութենէն . ( մինչ  
դեռ աստուած կը պատուիրէ չգիտ-  
ցողները սորվեցնել , անհաւատները  
քարոզել , գայլերու մէջ իր աշակերտ-  
ներն իբրեւ ոչխար խրկելով . ) թող  
բաժնէն անոնցմէ իրենց առուտուրն  
անգամ եթէ ունին . վասն զի հաւատ-  
քը անձնական շահերու վրայ փոխա-  
նակելը թերահաւատութե ամենագժ-  
ուարաններէի մեղաց ( իբրև թէ 1000  
- 2000 զըշով ներողութեան թուղթ  
մը ստանալ անկարելի եղած ըլլար , )  
մէջ կը ձգէ զմարդ : Հեռացէք , հե-  
ռացէք հերետիկոսներէն որ ձեր ըն-  
դունած Ս . հաղորդութեան խորհուր-  
դն ի դատապարտութի չըլլայ . եթէ  
կարելի է ջանացէք որ հերետիկոսի  
լեզուաւ ալ չխօսիք երբէք . ( որպէս  
թէ Հայոց լեզուն հերետիկոսի լե-  
զու եղած ըլլայ և ուղղափառ այսին-  
քնն սպառադաւան հայ սրբուհիներ-  
բու բերանն առնելու անարժան : )

Ամենախնդճ Վաղատացի . որ դեռ  
Պողոս սուրբեպի բու ՝ վրայ կնքած  
տիտղոսը չկրցար փոխել , դազատացի,  
մէկէն ՚ի մէկ հաւատացիր թէ Վրիս-  
տոս Մատուած արքայութեան բանա-  
լինները բոլոր պապին է տուած է , և ով  
որ պապին բռածին հակառակի , Մա-  
տուծոյ կը հակառակի , և ով որ նորա  
ներողութիւնը կընդունի մի անգամ ,  
արքայութեան մէջ այսչափ քառակու-  
սի կանգուն անդ ունի . խնդճ Վա-  
ղատացի , բուկին հարազատ եղբայր-  
ներդ թողուցիր , զքեզ երկնող ու ճը-  
նող մայրդ ուրացար , այլոց յորդիս գը-  
րեցար : ( Ետարին որդեգիր եղար .  
արծիւի ձուէն ծնար , այսօր ազուաւ  
ըլլալու մէջ փառք կը փնտռես , բարձ-

բուժենէ՛, յերկիր խոնարհեալ ( ճշմարտութենէ՛ բոլորովին զրկուած կոյր տգիտութեան թանձրամած խաւաւ թաւ պաշարեալ . ) մայրենի լեզուդ կորսնցունելով ազգութեան պատիւդ զոհելէ՛ զատ բարբարական թափառեցար օտար լեզուաց մէջ . Ատուած պաշտութիւնը ձգելով պապագաւանութիւնը ժառանգեցիր . . . . մենք դարձեալ ըստ բանի սուրբ Աւետարանի կը գթամք մեր եղբարցդ վրայ և կաղօթեմք որ դարձեալ երկնից պարգեւօք կարողանայք թո՛թիվել պապական բռնաբարոյ լուծը և ստանալ Աւետարանի լուծը որ քաղցր է եւ փոքրօքի :

Այս աստուածաբանները այնչափ յաջողեցան համոզել զկանանին հայոց հետ յարաբերութիւն չընելու , որ մինչեւ անգամ զերար բարեւեղին և առևտրական յարաբերութիւնին դադրեցնելէ զատ , բոլորովին մոռցան Հայոց լեզունալ . և սկսան ոմանք տաճիկէն խօսիլ և ոմանք գաղղիներէն որպէս զի հերետիկոսի լեզուաւ խօսած չըլլան և չխօսին : Այս կանանւոյն պարզ մտութեամբ խաբուիլն ալ հետեւեալ դէպքէն յայտնի կ'իմացուի :

Արբ ասոնք հաստատապէս միտքերնին դրած են որ երբէք հայերէն չըխօսին , մտքերնին կ'ուգայ թէ իրենց վերապատուելիները ինչու հերետիկոսի լեզուաւ պատարագ կ'ընեն . կը բողոքեն միաբերան որ այնուհետեւ սուրբ պատարագի խորհուրդը չեն ուզեր լսել որ անգամ մ'ալ հերետիկոսի լեզուաւ ըլլայ . ուստի պէտք է լատիներէն ըլլայ միշտ որն որ հռովմէականաց սրբազան լեզուն է : Ասկայն խաբեբայից տազնապը տես հիմայ ինչպէս պիտի պատարագեն . երբ իրենք լատիներէն կամ ուրիշ լեզու չեն դիտեր , տաճիկերէն լեզուաւ ալ

պատարագելու Ա . Պատը Հրամայեր հայերէն պատարագէն ալ կանանին պիտի գայթակղի : Ի՛նք հիմա իրատիչ մը որ ուսուցանէ այս աստուածաբաններուն թէ այս երկապրաբանութեան ո՞ր ծայրն ընդունին :

Այս պատմութիւնը մեզ պատմուած է , հռովմէական հայ անհատէ մը որն որ թէպէտ հայատանեայց Ա . Արկեղեցւոյ Ա . Աւազանին ծնունդ է սակայն իւր մանկութեան հասակէն սուցա վարմին մէջ բռնուած . և կը պախարակուի միշտ իւր ընտանիքէն ու ազգականներէն վերապատուելիներու լուծին հետեւելով և անոնց ըսածներուն ականջ չկախելովը : Ինեղձ կանանին նենգաւորին չարութեամբ անձնական շահու համար տուած խրատը բարեմտութեամբ մարդկային ազգի փրկութեանը նպատիչ առնելով . բնութեանն արթնցած ժամանակը պիտի ընդունի իբրեւ գայթակղեալ իւր ընկերը . և եկեղեցւոյ քարոզի ունկընդրութենէն վերադարձած իբրեւ հերետիկոս կամ իբրեւ հեթանոս պիտի մերժէ իւր ընկերը : Ար վարդապետին պիտի հասկցնեմք , զոր աստուած զուգեսց մարդ մի մեկնեսցէ ու աստուած ծային վճիռը և անոր հրամանը : « այնուհետեւ ոչ են երկու , այլ մի մարմին ու եկեղեցւոյ միացուցածը բաժանողն ո՞վ է :

Այն , հռովմէագաւան հայ վերապատուելիներուն , շատ մը քօլեճիներու օր մէկ անօրէնութիւնները մէջ բերեմք , որոնք աւետարանի հակասութիւններն են :

Անզ հիմա կը միայ անաչառապէս պատասխանել Վաթրճեան վերապատուելիի հատուած առ հատուած գրուածոց . և իւր ունեցած կոչումները լմնցնել ուր որ պակաս կը խօսի և կ'ուզէ լուրժեամբ անցնիլ :

Քրիստոնէական հաւատոյ աղբիւ-  
րն ու կայանքը միանգամայն սուրբ  
Մ. հարց գրուածքներն անոր համար  
կընդունուին եկեղեցւոյ մէջ, վասն  
զի սուրբ Աւետարանէն առած կ'ու-  
սուցանեն առանց երբէք բան մը պակ-  
սեցնելու կամ աւելցնելու . հաւատոյ  
վերաբերեալ գրքերը Աւետարանաւ  
կը հաստատուին , և ոչ հարց գրու-  
ածքներով :

Ատուածութիւնն իրապէի կտա-  
կարան կուտայ Սովսեօի ձեռամբ . սա  
կայն Սարգիսները կ'արգելուն զայն կար-  
գալու ժողովրդեան , և թալմուտ կը  
յօրինեն անոնց կարդալու համար . քա-  
նի որ տէրջը պատուիրանն առ ժող-  
վուրդն է , ժողովրդեան ինչո՞ւ պիտի  
արգելու իւր պատուիրանաց գիրքը  
կարդալու , կամ թէ ծառայ մ' ինչ  
պէս կրնայ արգիլուած ըլլալ առ ինքն  
եղած պատուէրն յիշելէ : Ասոր ճիշդ  
օրինակն ունի մեր վերստպատուելին .  
նոր կտակարանը մէկդի առած մէջ կը  
բերէ մեզ հարց ըսածը . այնպիսի հարց  
գորս չճանաչէր երբէք Հայոց ազգը  
և Եկեղեցին :

Այնպիսի երկչտուութիւ կը մերձե-  
նայ որ Աւետարանի վիտյութեանց ,  
կտրծես թէ աշխարհ վասն պիտի փր-  
չի . բերելիք վիտյութեան հարիւր բա-  
ռէն երկու հատն հագիւ կրնայ բերան  
առնուլ , միւսներն հետս թողլով իւր  
մտացն յարմարցնելու մտօք : Հօգ չէ  
եթէ ասոր նման հազար մէկ հատ սա-  
տուածաբաններ միաբանին , ողջմիտ  
ներուն և ոչ մէկը չեն կրնար համո-  
ղել թէ « փրկութի ՚ի հրէից է » ըսե-  
լով . « Պոսպ ՚ի Հասվմէ , արտաքոյ հը  
ռովմայ չիք փրկութիւն » ըսել կուզե-  
աւետարանը :

Այս և ասոր նման խարէութիւն  
ները պիտի հերքեմք հետզհետէ Սիւ-


նի միջոցաւ հրատարակելով , և պիտի  
յայտնեմք վերապատուելիներուն թէ  
ի՞նչ պիտալ ունին հոտվմայեցիք այդ  
հիմնական տարբերութիւններով Հա-  
յոց եկեղեցիէն տարբերելուն մէջ :

Վիտաւոր նպատակնիս ուրիշ բան  
չէ , եթէ ոչ յիշեալ վերապատուելին  
իւր այս հեղինակութեամբ ժողովր-  
դեան մէջ սերմնամ զրտութեան ու  
րամն յարմատոյ խել . արդէն որոնք  
որ բուն գայթակղեալք են , պատրած  
են իրենց կտրծեայը կամ յուսոյն մէջ ,  
և սրոնք որ գայթակղած չեն , անչաւ շա-  
եմք որ նոքա պիտի շահին :

1870 Փետրւոր 9 .

յԵՐՈՍԱՊՈԼԻՏ :

\* \* \*



Գատիարակութե վրայ խօսուած  
յետագայ ճառը կը գնենք Սիօնի մէջ  
Գերմաներէնէ թարգմանեալ ընթեր-  
ցասիրաց փոփոքր լեցնելու համար :

Մ Ե Մ Ա Պ Ա Տ Ի Ի Ժ Ո Ղ Ո Վ .

Հատ տարիներից առաջ՝ ընթեր-  
ցայ ես այս տեղ մի ճառ՝ կանանց թէ  
հին և թէ քրիստոնէական ժամանակի  
գրութեան վրայ , որ վերջն էլ հասա-  
կանանց այժմեան զարգացման ձեւին  
որին աւելի հետամուտ լինիլ չ'կար-  
ղացայ : Այնուհետեւ շատ անգամ  
առաջարկուած է ինձ՝ մի ուրիշ ճա-  
ռում անել , այսինքն այն ժամանակեայ  
միայն համառօտ նկատածս աւելի ըն-  
դարձակել : Արովհետեւ նոր ժամա-  
նակներումս այս ցանկութիւնը մի նոր  
ուղղութիւն ստացաւ , սրի մէջ ես էլ  
յիմ կողմանէ պարտաւորուած եմ ժա-  
մանակին յարմար և արդիւնաւոր հա-  
մարել սրա վրայ խօսիլը , չ'կամեցայ

խորշիլ այս նիւթը կրկին վերառնելուց, որ գուցէ որանալ մի աւելի ներգործիչ շարժում առաջ բերուի :

Յանկալի է լուծել այս հարցը թէ՛ ինչպէս պէտք է օգտուէտ կայուցա նել կանանց մասու զ հասակի կրթութեան համար այն միջոցը կամ ժամանակը, երբ նրանք իրանց ուսման ընթացքը աւարտուած են վարժարանում, այսինքն 15, 16 տարեկան դասնալուց յետոյ, Այս հարցին պատասխանելու համար, որ այս աեղ կամենում եմ փորձ փորձել, պարտաւոր եմ ըմբռնել այս նիւթը իրա աւելի հեռուոր կապով :

Շուտով երկու հարիւր տարի կը լինի, որ Փենելոն գրեց աղջկերանց կրթութեան վրայ գիրքը : Այս սկսում է այս պարբերութիւնով : Աղջկերանց կրթութիւնից աւելի զանց աւելաբան չ'ից : Թէ՛ նա միշտ գեռ մի և նայնր Ֆրանսայի համար պարաւորուած կը լինէր աւել, մինչև այս նոր ժամանակներս շատ անգամ կրկնուած է : Բայց ինչպէս է Վերմանեայում այս կազմանէ :

Յօժօրութեամբ կարելի է խոստովանիլ, որ մեզանում չ'են պակաս աղջկերանց կրթութեան և զարգացման համար՝ ոչ չահաւէտութիւններ (Interesse) և ոչ զանազան ու թանկագին կարգադրութիւններ (Einrichtungen) . բայց այնու ամենայնիւ համարձակելի է խօսել մի զանցաութեան վրայ : Սակայն ինչ հասցէով է ուղղուած մի այսպիսի յանդիմանութիւն (Vorsurf) Աթէ խօսակցութիւնը լինէր արանց մատաղ հասակի վրայ, այսօր մեզանում կառավարութեան կը վերաբերէր . ուրովհետեւ նա Տղերանց և պատանեկաց վարժարանները տէրութեան կարգաւորութեան տակն է մտցրել այն պայմանով, որ նրանցում այն ճանապարհները բացուին, որանք ստրատի

տանում են դէպի տէրութեան բարնկեցութեան ստանդարտ նպատակները : Աթէ այս տեղից նայինք կանանց մատաղ հասակի կրթութեան դրացի նահանգին, անպատճառ անտեղ կը տեսնենք իսկոյն մի մեծ անհաւասարութիւն, այն է թէ՛ տէրութիւնը նրանց համար իրա միջոցներից մի փոքր աչախոյս բան է վեր գնում, համեմատելով արանց վարժարանների հետ : Բայց պիտի զարմանանք որա վերայ և մի նորագոյն Ֆրանսիացի հեղինակի հետ գոչենք : « Այս ինչ հակադրութիւն է . մենք տալիս ենք միւս սեռին արտաքին ամենակարելի յարգանքներ . բայց բացառում իրաւունք : Աթէ նրանք ունին աւելի փոքր իրաւունք, աւելի փոքր ընդունակութիւն, աւելի փոքր հօգեկան կարիք » : Կարելի է այս հարցերին պատասխանել « ոչ » : Բայց այնու ամենայնիւ մեզանում եղած յարաբերութիւնը գլխաւորապէս ուղղը համարիլ, աղջկերանց դատարակութիւնը այնչտի միայն խիստ կանոնի տակ է, ինչպէս ընդհանուր ժողովրդական վարժարանում առաջ է գնում : Անցածներումը շատ բան ինչ որ կանանց սեռի կրթութեան համար լինում է, բարձի թողի է զարգանում : Այսպէս անուանուած դասարանի վարժարանները կառուցուած են քիչ բացառութիւններով կամ առանձնապէս ձեռնարկութեամբ . կամ կամաւորապէս բողոքական հասարակութիւններից և չ'ունին ընդհանուր մարանական կանոնագրութի (Vorschrift) ներքին կարգադրութեան և ուսանելու ձեւի համար, թէեւ ձեւացած էլ լինի հետ զհետէ մի յայտնի համաձայնութիւն, որի վրայ էլ բնականաբար տարածանում տէրութեան ընդհանուր վերատեսչութիւնը :

Բայց տէրութեան կողմից այս թոյ

լատուութիւնը՝ այդեօք այս դէպ  
քում մի անհոգութիւն է, կամ չը  
պէ՞ք է նոյն վերաաեսչութիւնը կամ  
հայեցողութիւնը, որով յայտնի է  
թէ՛ ինչն է օգտաւէտ պատանիներէն  
ամենի բարեկեցութեան համար, այն  
խորին նշանակութիւն էլ ստանար,  
որ կ'անանց կրթութիւնը սովորութե  
համեմատ ընդհանրացնում է, նրա մէջ  
ամիրտիւրով և հայրենիքը: Այսպէս ա  
տէրութիւնը չէ կարող անտարբեր  
աչքով նայիլ սրա վրայ, նայնպէս և չէ  
կարող խոստովանիլ թէ ընդհանուր  
կանոններով և կարգերով չէ կարող  
առաջ տանիլ այն, ինչ որ այստեղ շա  
հաւէտ և ներգործիչ է, թէ՛ կանանց  
զարգացման հատուկանալը միայն փոքր  
կախուած է հասարակական վորժա  
րաններէրց, թէ՛ այս զարգացումը բը  
նականաբար աւելի ընտանեաց և տան  
իրաւունք և պարտաւորութիւն է,  
ուրեմն մի այնպիսի վիճակի, որ տէրու  
թեան անմիջապէս ներգործութեանց  
հետի է: Մի տէրութեան կանանց  
վորժարանի էութիւն, համապատաս  
խան մարդկանց եղածինին, մի երե  
ւակայելու բան է, որ մեզ համար ու  
նի ներքին հակասութիւն, անքնական  
և անկատարելի: Այնու ամենայնիւ  
թէ որ աստիճանի կարող է տէրութիւնը  
մի միջապէս ներգործութիւն էլ կու  
նանց կրթութեան վիճակին վրայ ցանկե  
տալ, վերջը ինքնին յայտնի կը լինի: Տէ  
րութեան օգուտը, եթէ մի փոքր էլ  
է կայ, երբ իրաներգործութիւնը ըն  
տանիքում լինի և գրանով էլ հարկը կա  
տարուի, այնպէս է, ինչպէս եկեղե  
ցունը: Տէրութեան համար մի կեն  
սական պայման է այս: Արովհետեւ  
ժողովրդի զօրութեան և տէրութեան  
հիմունքը՝ ընտանիքն է և ընտանիքն  
էլ աւելի կանանց իշխանութեան ան  
վիճելի հարստութիւնը:

Մարդկային հասարակութեան՝ Այս  
տուճոյ նշանակած դասը՝ ընդհանուր  
է երկու սեռի համար, և վերջն էլ մի  
զուգակցական ամբողջութիւն է կազ  
մուում ոչ միայն ամուսնու թեան, այլ  
ընդհանրապէս կեանքի, աշխարհային  
տնտեսութեան մեծ կապակցութեան  
մէջ: Այս սեղ արանց բաժին է  
ընկել աւելի դէպ ի դուրս ու զղած  
հայթայթիչ և կառուցիչ գործունէ  
ութիւն. իսկ կանանց՝ պահպանիչ,  
խնամիչ, տածիչ: Ամենքն էլ ունին  
մայրական կոչում, մինչև անգամ նը  
րանք էլ, որոնք ամուսնութեան մէջ  
չ'են մտած, կանանց ձեռքին և սրբ  
տին է յանձնուած մարմնայ և հոգւոյ  
զօրութիւնները մասին ամենալազ հո  
դատարութիւնը: Արթութեան առա  
ջին սերմերը ընտանեկան կեանքի խո  
րութեան մէջն են և այն տեղից հեղ  
ւումեն, յաճախ շատ աննշմարելի ըս  
կըտուներներով, բաղդաւորութեան և  
տարաբաղդութեան աղբիւրները հա  
սարակական և մասնաւոր կեանքի ա  
մէն վիճակին մէջ: Մայրն է տան հո  
գին: Եթէ երեխայն փարսաւում է նրա  
մարմնական կեանքից, մնում է, երկու ին  
մէջ այն ամենաներքին կապը, որով աչ  
խարքիս երեսին երկու մարդ կարող են  
կապուիլ: Մի անհամար անգամ արած  
նկատողութիւն է, թէ ուղղակի ա  
րու զաւակներն հոգեւորապէս և մար  
մնաւորապէս մօրերի ժառանգներն  
են. և սով ինքը փորձել է թէ՛ ինչ կա  
րող է անել մի մօր սէր և հերոսակա  
նութիւն, նա կը հասկանայ, որ այն  
չափ մարդիկ ճանաչել և խոստովանել  
են, թէ՛ ինչպէս որ իրանք բարի են,  
իրանց մօր սահմանած առաջին ազդե  
ցութեամբն են: Արիչ ժողովուրդ  
ների մէջ էլ զարմանալով ասուիլ է  
թէ՛ ինչ բաւ հոգի և բնաւորութիւն  
որ Վերմանացիքը ունին, ամենայաւ:

մեծ մասով մօրերիցն է և նույս ներ-  
գործութեանց ընտանիքի մէջ : Հո-  
գւոյ վրան առաջին ապաւորութիւնը  
անուամ է սէրը , հաւատարմութիւնը  
և բոլոր առաքինութիւնը՝ ոչ ուսու-  
մով , այլ կենդանի գաղափարով կամ  
օրինակով : Վեչ որ Վեգլիայումը մօ-  
րերին են տալիս արու զուակների միա-  
քը բայց աներում , մանաւանդ ծան-  
րաբարոյութիւնը և հաստատամտու-  
թիւնը , որը գիտէ թէ՛ ինչպէս պիտի  
երեսխայներին փափկութեց հեռի սր-  
հէր մի ժամանակ ընդհանրապէս Վեր-  
մանական անային մանկավարժութեան  
մէջ ուղղակի կանանց հոգացողութիւ-  
նին էր , իրանց կոչումին համեմատ  
սրահելով և սրահպանելով , սւր կեան-  
քի զօրութեան և գեղեցիկութեան ա-  
ռաջին հիմքն է :

Կարճ , մի սեռը վերաբերում է  
միւսին և չէ կորոյ այս կողմնակցու-  
թեան մէջ այն լինիլ , ինչ որ պիտի .  
խակ և թէ մինը չկայ , ինչպէս որ պի-  
տի : Ֆենելսնը ասումէ . Կթէ այրե-  
րը ոչինչ չարժեն , ըստ մեծի մասին  
կանայքն են մեղաւոր :

Կանայք իրանց կոչումին համար  
ուենին մի բնական հարուստ օժիտ  
(Mitgäde) . բայց զարգացումը և կրթ-  
թութիւնը պիտի օգնեն , որ նրանք  
այս կոչումը կատարելու ստատաւորու-  
ւին և յա մ'որանն :

Կրթութիւնն (1) հակացողութիւնը  
ընդունելով ոչ իբրև ստացում , այլ  
իբրև գործողութիւն , երեք բան է  
առաջ բերում . նիւթ , որ կրթութեան  
համար նշանակուած պիտի լինի . նպա-  
փակ կամ գաղափար , որ նիւթին վրայ ի-

րագործուի . և երրորդ իրագործողէ յե-  
տը : Նախ և առաջ նկատենք այս երեքը :

Կրթութեան նիւթը երեսայի հո-  
գին և ամբողջ բնութիւնն է : Կուցէ  
մանկավարժական ամենամեծ ճարտա-  
րութիւնն է գիանալ և ուղիղ ի գործ  
գնել . ինչ որայնտեղ կայ : Արովհետեւ  
յարակայ (Absolute) մանկավարժութի  
չկայ , իւրաքանչիւր մանուկ այլ է , եւ  
պահանջումէ այլապէս վարուողութիւն  
իրան հետ : Վսնու ամենայնիւ որչափ  
որ իւրաքանչիւր երեսայ անհատական  
լինի . դարձեալ առաջին տարիներումը  
ամենի մէջ շատ բան կայ ընդհանուր .  
օրինակի համար , մտածողութիւնը և  
երեւակայութիւնը զարգանում են ա-  
ւելի առաջ , քան թէ ճանաչողութիւ-  
նը : Կայց և թէ մարդ կամենար զա-  
նազանիլ թէ՛ մի որոշեալ կամքի ուղ-  
ղութիւն աւելի շուտով տղերանց  
մօտ է առաջ գալի , քան թէ աղջկե-  
րանց , այն ժամանակը հակառակ փոր-  
ձերը ցոյց կը տային թէ այսպիսի զա-  
նազանութիւնները յարաբերական են  
և թէ՛ սրանց վրայ հաղիւ թէ մի քանի  
ընդհանուր բան խօսելու է : Արան  
համեմատ երկու սեռին սեպհական  
հիմնաւոր զանազանութիւնը , որ նը-  
րանց բնական գրութեան (Disposition)  
մէջ է , ընդհանրապէս ընդունուիլ է՝  
ինչպէս մի կանոն ոչ էապէս խանգա-  
րուած մի մի բացառութիւններով , և  
անշուշտ անվիճելի է թէ՛ աղջկերանց  
մօտ վաղ յառաջանում է մի աւելի  
մեծ ընդունողութիւն և շարժողութի  
զգացմունքի և ոգու կողմանէ :

Նյս անմիջապիսութեան սահմա-  
նից՝ կարելի է հետեւայնել կանանց  
հոգեկան կեանքին ամենից շատ սեպ-  
հականը , նրանց առոյգ և քիբոյշ բզ-  
գացողութիւնը , աւելի փութով բլ  
բռնողութիւնը և աւելի շուտով ընդ-  
հանուր զարգացումը : Աւր տղայն ,

(1) Գերմանական բնէ Bildung որ նշանակում է  
պատկերացուցումն էլ , սրտիկը բառից , Գ . Ջե-  
ղնակը այս տեղ պատկերի նիւթի , ձեւի և շին-  
ղի վրայ և ակնարկել :

որ աշխատում է ամեն բան նիւթաւ պէս ճանաչելով իրան սեպհականել, իրա նորասկիզբ մտածողութեան հարցերին պատասխան է փնտռում, այն տեղ է աղջկայ կողմից աւելի արագ և անմիջապէս հասկացողութիւն և դատողութիւն : Մարդու հասկացողութիւնը ընտրում և կառուցանում է կտոր կտոր, այն ինչ կնշտայ հոգու ճիշդ գնում է աւելի ամբողջը հայելու վրայ և ուղղուած է մասերի աւելի միութեան, քան թէ զանազանութեան վրայ : Սրան հետ միասին կապուած է այն, ինչում կինը իրան աւելի թեթև է զգում, այսինքն աւելի հաւատով անձնանուիրութիւն, յարգանք ստացականի և դրականի, աւանդութեան և սովորութեան առաջին, ուրեմն աւելի բարեպաշտութիւն, այն ինչ տղղի մօտ վաղ զարթնումէ քննադատութիւնը, որը եղած բանին կամենում է ձեւ տալ :

Աւելի զգայմամբ և հայեցողութիւն կեանքին համապատասխան է աւելի հասկացողութիւն մի անձի համար, քան թէ ընդհանուրի, աւելի կախում համակրութիւնից և հակակրութիւնից (Sympathie und Antipathie), քան թէ արամբարնական պատճառներից, վերջապէս աւելի առոյգ միտք՝ ձեւի եւ երեւելու վրայ, և սրանով ուղղութիւն գէպի երեւակայութիւնը (Idealität), բնական աղղմամբ ձգտում գէպի գեղեցիկը : բարեհաճողութիւն ամէն ներդաշնական և ոգեւորիչ բանում : Հարկու ձեւի և երեւելու այս մրտքի հետ սերտ կապուած է այս հոգացողութիւնը : Կնչպէս եմ երեւում ես : Աւ այս այն ժամանակն է, երբ ամենը, ինչ որ պատիւ կամ պարկեշտութիւն է, տղային սովորաբար բարբորովին մի և նայն է թուում :

Ուրեմն բանը միայն այնտեղ հա

աւա, որ յիշելու էր կանանց բնուրութեան մի քանի գծադրութիւնները. որպէս զի այժմ երկրորդումն էլ, այսինքն զարգացման նարտակումը կարելի լինի այս մասին յարաբերութիւն դուրս բերել : Այս նպատակը ձեւա նումէ բնութեան տուածին հետ այն ճակատադրով, որին մանուկը ընդառաջ է երանում այն հասարակութեան մէջ, ուր տան է դնում ծնուելուց յետոյ : Սրան նայելով մենք կիմանանք թէ՛ ինչն է զարգացման խնդիրը, երբ կեանքի ամբողջութիւնը աչքի առջև տանենք : Մի հին առած է թէ՛ ամբողջը մատուցնելից առաջ է, այսինքն գաղափարի մէջ, ընդհակառակն է, գաղափարի ժամանակեայ իրագործութեան մէջ, Կնչպէս սերմի հատիկի մէջ ծառը մտկուած է, այնպէս էլ ամէն գործարանուորի ներկայ և ահա նաանս էութեան մէջ ապագայինը, որը միայն հոգու մէջ տեսնում եմ, ուրի վրայ, ինչպէս սկզբնական և իսկական նպատակի, ամբողջ ածումը ուղղուած է : Այս ամբողջի գաղափարն էլ պիտի զարգացման վրայ իշխի, իսկ եթէ զարգացումը միայն մի նշանակեալ ժամանակի համար է, ոչ մի զարգացում չէ, որովհետեւ չունի ոչ մի նպատակ, այլ կամենում է միայն ժամանակեայ բարեկեցութիւն յառաջ բերել կամ որահոսնել, Այս պատճառով ոչ որ երեխայից չի խլել նրա երկխոյութիւնը, բայց թէ՛ տղայն մարդ պիտի դառնայ, զարգացման ժամանակ առաջին քայլերն էլ սրտած կամ նշանակած պիտի լինին : Այժմ ամբողջը, որի վրայ ուղղած պիտի լինի զարգացնողի հայեացքը, չէ սահմանադրուում միայն երկրային կոչումով այլ շրջափակում է Ատուծոյ աէրութիւնն էլ, գէպի որը գիմելու պահանջողութիւնը իւրաքանչիւր մանուկ

իրան հե տաշխարհ է բերում: Գուցէ այս երկակի և ինքն ըստ ինքեան անբաժանելի երկնային և երկրային կոչման մեծութիւնն է, որ ծնողներին սրտին շատ անդամ զարգացումը առ մենադժուար հոգացալութիւններէց մէկն է թուայնում:

Ի՞նչ օժանդակութիւն և ի՞նչ պաշտպանութիւն էք տեսնում ձեր առաջին մի նորածին անօգնական մանկան մէջ: Թմրած զօրութիւններն առատութիւն և հոգւովը շուտով պատելի աննշմարելի կարողութիւններ: Աբրեւմըն բանը միայն հոգալումը չէ թէ՛ մանուկը ապրի և հասունանայ, այլ թէ՛ իրա հոգին պաշտպանի և թէ՛ վաղ հոգու մէջ այն անկուրի, ինչ որ կեանքը արժանաւոր և ճշմարտապէս բաղտուոր է կացուցանում: Ի՞նչու համար զարգացնել մանկանց, եթէ ոչ ընդամենը (Zur Fortpflanzung) յառաջ տնտեսական ճշմարտութիւնները, որոնք մեզ բարձրացնում և երջանկացնում են, եթէ ոչ այն ցանկութեամբ, թէ այս ճշմարտութիւններին տիրապետելը զինաւորի նրանց կեանքի մէջ իրանց և այն անձանց բարբորութեան համար, որոնց հետ կեանք են վարելու:

Այս մասին պայմաններ ի բոքան շիւրի մէջ կան, համաձայն ընտրած և բնութեան տուած ուղղութիւններն միջին ներդաշնակութեան: Այս պայմաններն գումարը կամ միութիւնը մարդու անձնականութեան են անուանում և նշանակում ենք, իբրեւ զարգացման վերջին նպատակ, անձնականութեան լրակատար կրթութիւնը, այն խնդիրը, որով մարդուն իրան մէջ իսկապէս իրա անձին մէջ մտցնում ենք, այսինքն ինչ որ իւրաքանչիւր մարդ իրա մէջ կրում է, շատ ու բիշ պարզ հասկացողութեամբ: «Իւրաքանչիւրի առաջին դրած է այն պատ-

կերը, ինչ որ նա գառնալու է. քանի որ նա այն չէ, նրա խաղաղութիւնը լցնալ չէ»: Այս երկու կերպի ինչ կամ անչը, այսինքն թէ՛ բնութեան եւ թէ՛ կոչման, արար զմարդն ըստ պատկերի ի բում. ճանաչում ենք միայն առատարանի ըստով և միայն նրա զօրութեամբ էլ հասնում ճշմարտա Ինչ ին: Մարդը քրիստոնէութեան ժամանակ միայն ճանաչեց ճշմարտապէս իրա եւութիւնը: Արթութիւնը այս ամենա մեծ մարմին է վերածնութիւն. հոգու և կամիքի վերանորոգութիւն՝ Առտուծոյ Հոգուն զօրութեամբ, և եթէ այսպէս է, ապա Առտուծոյ Հոգին կրթութեան մէջ մարդկանց դործածում, իբրեւ իրան դործակիցք: Մի այսպիսի կրթութիւն՝ միշտ կրթութիւն էլ է ճշմարտութեան և ազատութեան համար, և սրանով էլ է ճշմարտութեան և ազատութեան համար, և սրանով էլ է ճանապարհը թէ՛ մի Առտուծոյ մարդ յարմարութիւնի ամեն բարի գործի: Այս մի և նոյն ճանապարհն է ամենքի համար: Սրա վրայ բնականը չէ ճնշում, այլ մարտում և Բարձրելին ծառայութեան մէջ ընդունում է, և ինչ որ կեանքը զարգարուիլ և պաճու ճիլ կարող է, դէն չէ գլուցում: Ըմեն ինչ ձերն է, բայց դուք Քրիստոսի էք:

Արդ կանանց բնաւորութեան առմեն բանում, ինչ որ առաջուց սրան վրայ խօսուիլ է, ուղղակի նպատակն է աւելի անձնական գոյութեան մի ներքին կարողութիւն, քան թէ մի բազմակողմանի աշխատութիւն դէպի դուրս, որի գիտենալը և կարողանալը ինչպէս գործիք, պիտի արու զուակը իրան վաղ սեպհականացիք: Ամենաբար, ինչ որ կանայքն են և անում են, իրանց էութեան (Mesen) ամբողջութն է լինում. նրանց բոլոր ստիւրական կա-

ըողու թիւնները աւելի մի ներքին միա-  
սին ներգործող միութիւն են կազմում  
քան թէ սովորաբար այդ մարդուները  
(տղայ մարդուներ)։ Աւստի աղջկերանց  
խիստական զարգացումը ուղղութիւն է  
ստանում գէպի անձնականութիւնը,  
գէպի այն, ինչ որ նրանցում սուրբ  
գիրքը սրբի գաղտնի մարդ է անուանում։  
Մրան նայելով՝ ուրեմն բանը իս-  
կապէս նրանում պիտի լինի, որ պահ-  
պանենք բնութեան գործնական կար-  
գադրութիւնը՝ իրա ամենագեղեցիկ  
նշանակութեամբ. ամեն դաստիարա-  
կութեան (Unterricht) մէջ զարգացման  
կողմին ներգործութիւն տանք. ու-  
ղիղ ձգե՛նք զգացման շարժողութիւ-  
նը, ուր ամենախոր արմատանում է  
աղջկերանց կամենալը և կարողանալը,  
որպէս զի ամեն բան ինչ որ անելի է,  
կարեւորութեան հետ յառաջանայ այս  
անմիջապէս սրուշմունքից, և ոչ թէ  
արաքրուստ սովորած լինի։ Այս միտ-  
քով, ինչպէս գեղեցիկ էլ ասել է, ե-  
րեխանց գէպի քաղաքավարութիւն  
կրթելու համար՝ հարկաւոր է նրանց  
մէջ ներածիլ բարի մտածմունքներ գէ-  
պի իրանց ընկերակիցքը, որը Վէօ-  
թէն սրտի քաղաքավարութիւն է ան-  
ւանում, ուր ներքին մարդու պատ-  
կերն է արտափայլում։ Այս ձեւով  
պիտի ներքին առողջութեան արտա-  
սանութիւն լինի կեանքի իւրաքանչիւր  
բարի յատկութիւնը և ամեն շքեղու-  
թիւնը, որ համապատասխան կառումն  
է, մարքութեան, ծիսի և վայելուչ  
յարմարութեան։ Մրանով մի և նոյն  
ժամանակ ապացուցուեցաւ այն հար-  
կաւոր զգուշութիւնը թէ վայելուչ  
երեւելու միտքը չը դառնայ մի կրկ-  
նակի նշանակութեամբ սնապերձ ե-  
րեւելու սէր և գէպի երեւայականը  
ուղղուած ձգողութիւնը՝ չը կորչի  
փոքրիկութեան մէջ, այլ ուղղուի իս-

կապէս գէպի բարձր մարդկային հո-  
գու արժանի նպատակները և անպատ-  
ճառ լինի ընդունելութիւն կեանքի  
հոգեկան բովանդակութեան և յար-  
գանք ամեն ճշմարտապէս մեծի առաջ,  
խիկ դրականի միտքը և ստացականի  
պահպանողութիւնը ձեւակերպուի և  
դառնայ բարի յատկութեան հաստա-  
տութեան և հաւատարմութեան։  
(Պիտի շարունակութիւն)։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱՆՈՐ  
ԵՒ ՈՍՏԱՆ ԳԱՒԱՌԱՅ

(Շարունակութիւն) ակա թիւ 1)

Լիկեղեցի մը կայ, որուն անունն է  
Մենափրկիչ. որ անտէր և անտերունչ  
մնացած է. վասն զի գիւղացիք սակա-  
ւաթիւ և աղքատ ըլլալով ձեռնհաս  
չեն զինքն պահպանելու։ Գիւղիս ա-  
նուան գալով աւանդութեամբ կ'ըս-  
ուի թէ երբոր Հայկ Բեւիլն կը յաղ-  
թէ, Հայկայ թոռն կաթմոսի ընտա-  
նիքը որ նոյն տեղը իջեւանած էին  
Հայկայ յաղթութիւնը լսելով մի-  
մեանց ըսած կ'ըլլան «Լիկայք հրրձ-  
ուեսցո՛ք զի Հայկ յաղթեաց Բեւլայո՛ւ  
այս պատճառաւ է որ մինչեւ ցոյսօր  
նոյն գիւղի անունը Հերձ կ'ըսուի,  
ժամն երկուքին այս գիւղէն մեկնելով  
ժամը չորսին հասանք կըլտաշ ըսուած  
Հայոց գիւղը որուն բնակիչը հաղիւ  
10 տան կը հասնի, բոլորն ալ հարուստ  
մանուանդ մահտեսի Յարութիւն-  
եան անուն գերդաստանը որ իւր ոչ  
խարսց կտուրը մինչեւ երեք հազարի  
կը հասնի, նոյնպէս ձին և տավար իսկ  
գիւղը խոռոչուտ ձորակի մը մէջ է,  
իւր արեւմտեան կողմն ունի մեծ քա-  
րանձաւ մը. նոյն քարանձաւի ստորու-  
տը յանուն սուրբ Աստուածածնայ ե-

կեղեցի մը կայ, իւր հիւսիսային կողմն  
 ընդարձակ դաշտ մը կայ, որոյ տարա-  
 ծութեան սահմանն արեւմտեան կող-  
 մէն դէպ ՚ի հիւսիս ձգուած է մինչեւ  
 Յանկզ գիւղի հարաւային սահմանը.  
 Իսկ երկայնութիւնը երեքու կէս ժա-  
 մու չափ ընդ արեւելեան հիւսիս իւր  
 սահմանը ձգած է. Աիմ գիւղի հա-  
 բաւային սահմանը ընդ արեւելեան  
 հարաւ երկու ժամ հեռաւորութիւ  
 իւր սահմանն ունի շերժուայ կամ  
 շրժու հաւշու ըսուած տեղ. 1860  
 թուականին Ան քաղաքէն կամուշ  
 օղլու անուն բարբարոս մէկն այս սահ-  
 մանէն մեծ մաս մը վերոյիշեալ Աղտաշ  
 գիւղացւոց ձեռքէն բռնի յափշտա-  
 կելով, այժմ իւրացուցած է. Գիւղիս  
 արեւելեան կողմը մեծ ձորակի մը մէջ  
 գեղեցիկ և պողատու այգի մը կայ.

Յետ վեց ժամու այս տեղէն մեկ-  
 նեցանք դէպ ՚ի հարաւային արեւմուտ  
 և ժամը ութնին հասանք շայոց գիւղ  
 մը որուն անունը Գերձ կ'ըսուի. իւր  
 մէջ յիսուն տուն բնակիչ կը բնակին.  
 Այս գիւղի դիրքը լեռնաձեւ գաշ-  
 տակի մը վրայ դրուած է. իւր հարա-  
 ւային կողմը ահագին բարձրութեամբ  
 շատ մը խոտաւէտ լեռներ կան, որոնց  
 շղթայներն Արտոս ըսուած մեծ լեռան  
 հետ կապուած են. իւր արեւմտեան  
 կողմը լեռան մէջ մեծ գաշտակ մը կայ,  
 որուն տարածութիւնը մինչեւ երեք  
 մղոնի կը հասնի. Իսկ երկայնութեան  
 ծայրը հիւսիսէն դէպ ՚ի հարաւ ձգ-  
 ուած է որն որ հինգ մղոնի կը հասնի.  
 Իսկ գիւղիս արեւելեան հիւսիսային  
 կողմն ընդարձակ դաշտալայր մը կայ.  
 Թեպէտ անջողի է, բայց շատ բերրի.  
 Իւր երկայնութիւնն ու տարածու-  
 թիւնը միահաւասար առնելով երեք  
 հարիւր մեթրի կը հասնի, իսկ գիւղիս  
 դիրքը դէպ ՚ի արեւելք կը հայի և ին-  
 քը հիւսիսային կողմը երեսուն քայր-

չափ հեռաւորութեամբ գեղեցիկ սրբ-  
 բառաշ քարէ շինուած յանուն սուրբ  
 Աստուածածնայ կամարակայ եկեղեցի  
 մը ունի ըստ բաւականին զարդարուն  
 Այս գիւղիս բնակիչները ըստ մեծի  
 մասին Ասկայ և Արթուայ և այլն այլ  
 գաւառներէն գաղթած են. Աւթը  
 ժամէն զինի մեկնեցանք աստի և ժա-  
 մը վեցին հասանք Կելթենց անունով  
 շայոց գիւղը այս գիւղս լեռնանման  
 բլրակի մը ստորոտն է իսկ բլրակը հիւ-  
 սիսային կողմանէ Արտոս լեռան հետ  
 հաղորդակցութիւն ունի, բլրակի եր-  
 կայնութիւն ծայրը դէպ ՚ի հիւսիս ուղ-  
 զագնացութեամբ կը հասնի մինչեւ  
 գիւղին մօտն եղած գաշտին մէջ. Եւ  
 միանգամայն գիւղը իւր շղթայներով  
 կը սարսփակէ. Գիւղիս բնակիչքը մին-  
 չեւ տասն և հինգ տան հազիւ կը հաս-  
 նին կեցութիւննին միջասահման, ու-  
 նին յանուն սուրբ Աստուածածնայ  
 սրբառաշ քարէ շինուած գեղեցիկ  
 կամարակայ եկեղեցի մը ըստ բաւա-  
 կանին զարդարուած. այս գիւղս շատ  
 գեղեցիկ դիրք մ' ունի. իւր բոլոր-  
 տիքը մարգագետիններով և ըստ բա-  
 ւականին ծառատունկներով զարդար-  
 ուած է. Գիւղիս հիւսիսային կողմը  
 ըստ բաւականին ընդարձակութեամբ  
 դաշտ մը կայ որ փոքր առուակի մը  
 և լճակի մը ջրով կ'ոռոգուի. գիւղին  
 արեւմտեան կողմէն դէպ ՚ի հարաւա-  
 կոյս կը թնամ բլրակին ետեւը գմբե-  
 թեայ մեծակառոյց վանք մը կայ յա-  
 նուն սուրբ Աստուածածնայ, որուն  
 սպիտակ վանքալ կ'ըսուի. այս վանքը  
 ըստ բաւականին կալուած և հող ու-  
 նի. ինքն ամուր պարսպով ամրափա-  
 կուած է. վանքին դիրքը մեծ բլրակի  
 մը վրայ է և միանգամայն Արտոս լե-  
 ռան ստորոտը կ'իջնայ. Այնքիս հիւսի-  
 սային կողմանէ կէս մղոն հեռաւորու-  
 թեամբ հայոց գիւղ մը կայ, որուն ա-

նունը թնայելի կ'ըսուի, իւր բնակիչքը մինչև տասն տունի հազիւ կը հասնի: յասն ու թին այս տեղէն մեկնելով ժամը տասնին հասանք Մնթան հայոց գիւղը, որուն բնակիչը երեսուն տան կը հասնի այս գիւղը Ռատան գաւառի Արև ելեան ծայրը կիյնայ իւր գիւղքը փոքր բլրակի մը վրայ դրուած է, իւր Արև ելեան կողմը քարաշէն կամարակապ եկեղեցի մը կայ, իւր թիկունքը ունի մեծ բլրակաձև լեռ մը, իսկ Արևմտեան կողմը փոքր ինչ ապառաժաւտ բլրակ մը կայ որուն անունը սէւաբորեր կըսուի, այս բլրակի Արև ելեան հիւսիսային կողմն երեք ձիւն թայ տարածութեամբ աղմուտ և շատ ջրային մարգագետին մը կայ, երկայնու թիւնը կը հասնի մինչև ցծովեղը Աղթամարայ, գիւղի Արև ելեան կողմէն փոքր ինչ դէպ ՚ի հիւսիս գեղեցիկ ջրաբբի և բերբի դաշտ մը կայ, որուն տարածութիւնը մինչև երկու ժամ կը տևէ: Վիւղիս բարբառքը ծառատունիներով զարդարուած է իւր դիմացն ունի Աղթամարայ ծովակը, իսկ Արևմտեան և հարաւային կողմանէ մէկ ու կէս ժամու չափ հեռաւորութիւն իւր լայնանիստ դաշտակի ծայրը մինչև Ռատան գաւառի սահմանը հասուցած է: Վիչեր մը այս գիւղիս մէջ օթելով առաւօտեան ժամը մեկին տեղէս մեկնեցանք, դէպ ՚ի չարահան ըսուած սուրբ Աշան վանքը, որ մէկ ժամաւ հեռի է վերջիչեալ Մնթան գիւղէն, այս վանքը Ռատան գաւառի Արև ելեան հարաւային կողմը կիյնայ և միանգամայն Արտու լեռան ստորափ հիւսիսային կողմն է, այս լեռը քսան և չորս Գամու չափ ժամանակաւ ելելու բարձրութիւն ունի: Իւր գագաթը գերեզման մը կայ, որուն համար կ'ըսեն թէ՛ Սիմեոն ճգնաւորի գերեզմանն է: Նաև կ'ըսեն որ Վարդ


պատիկ իշխանը սորա յորդորանօրը շատ մը վանքեր ու եկեղեցիներ շինած կըլլայ, այս այն լեռն է ուր երբեմն մեր սղերգու Աղիշէ սուրբ հայրը կ'ձրգնէ եղեր, և միանգամայն հայոց աշխարհի կործանման վրայ կողբար, այս լեռն յոռօջ Ռատանայ լեռ կ'ըսեն եղեր, սակայն մեր սղերգու Աղիշէ սուրբ հայրը իւր աղբիւրանման արտասուքը թափելով այս լեռին մէջ ըսած կ'ըլլայ «Ա՛հ արտասուաց լեռ եղար ո այս պատճառաւ է որ արտաս լեռ կ'ըսուի, իսկ այս լեռան հարաւային և արեւմտեան կողմը ապառաժաւտ և անջրդի է, երկայնութիւնը դէպ ՚ի հարաւ մինչև Հատախու լեռնէրը կ'ըհասնի: Իսկ արեւելեան կողմը շատ մը աղբիւրներ ծաղկաւէտ վայրերով ու գեղեցիկ մարգագետիններով զարդարուած է, իսկ վանքէն տաւրն Ժամու չափ բարձրութեամբ լեռան Արևելեան հիւսիւսային կողմը ահագին բարձրութիւն շատ մը խոռոչաւոր քարանձաւներ կան, որոնց գագաթը կը բարձրանայ մինչև ամպերը, աւանդութեամբ այսպէս կ'հաստատեն որպէս թէ մեր Աղիշէ Սուրբ հայրը Այս քարանձաւի մէջ աղօթած կ'ըլլայ, և քարանձաւի ստորաքարայրի մը առաջը քաղցրահամ փոքրիկ աղբիւր մը կը բղխէ, որուն աղօթքի աղբիւր կըսուի: Այս վանքէն երկու մեթրի հեռաւորութեամբ թնայելի անունով հայոց գիւղմը կայ որուն բնակիչը 10 տան հազիւ կ'հասնի, վանքիս սկսեալ դէպ ՚ի Արևմտեան հարաւոտանայ գաւառն է, որուն երկայնութիւնը վեց ժամ կը տևէ: Այս նահանհանգի հարաւային ծայրը մինչև շէլ ըսուած Հայոց գիւղը լեռներու ստորոտը կ'հասնի, նահանգիս գրից գալով ինքն տափարակ երկայնածիփ լայնանիստ ձորակին մէջ է: Եւ Ար

տոս լեռան ստորոտը կիցնայ . ձորակիս երկու կողմը անթիւ այգիներ քաղցրահամ պտղատու և ուրիշ ծառատունկներով զարդարուած է : Չորակի հարաւային կողմի լեռներէն շատ մը ձորակներ կարկաչասահ յորդարուղիս աղբիւրներ կ'իջնան , և այգիներուն մէջէն անցնելով մեծ ձորի մը կը խտնուին . որ Ստանայ գետ կ'ըսուի : Իսկ այս գետը հարաւէն ելլելով դէպ ՚ի հիւսիս կ'երթայ , Գագիկ Արծրունւոյ ամրոցի արեւելեան կողմը չորս վայրկեան հեռաւորութեամբ Տաճկաց միկիթի մը մօտ Աղթամարայ ծովը կը թափի : Այս գաւառի զմայելի անտարանը մի առ մի նկարագրելը մեռ կարողութենէն վեր բլբլը յայտնի կը խոստովանիմք : Այս գաւառի մէջ եղած բնակիչները երկու հարիւր տունէն աւելի կ'ըլլան բոլորն ալ մահմետական Վիւրտ , ըստ մեծի մասին աղքատ , սակայն աւաղակութե շատ հմուտ են : Գագիկ Արծրունւոյ ամրոցը Ստանայ գաւառի ստորան արեւմտեան կողմը Աղթամարայ ծովերը կիցնայ : Իսկ ամրոցիս դիրքը մեծ բլրակի մը գագաթին վայրուած է իւր երեսը դէպի յարեւելս կ'հայի . իսկ արեւմտեան կողմէն լայնանիստ լեռ մը կայ , որուն երկայնութեան գիծն Ստան գաւառի արեւմուտքէն մինչեւ հարաւային երկիրները շրջագատելով իր մէջ կը փակէ : Նաևս արեւմտեան կողմէն Սչառնի ու շիւլի լեռներու հեռ շղթայակապուած է :

Իսկ յարեւմտեան կողմ ամրոցիս տասը վայրկեան հեռու ահագին բարձրութեամբ ժայռ մը կայ , որոյ տարածութիւնը մինչեւ Ծամարի կապանըս ուած տեղ կը հասնի , տեղուոյս անուան գարով կ'ըսեն թէ երուզակապետ ջոմար այստեղս զինքը ծով ձգելով , անոր համար տեղուոյս անունը ջոմարի կա-

պան կ'ըսեն . նաև ժայռաքարի ներքեւէն կանցիի նեղ և անձյուկ միանգամայն երկիւղալի ճանապարհ մը . այս տեղս աւաղակութիւնը , մարդասպանութիւնը միշտ անպակաս է : Իսկ ամրոցիս արեւմտեան հիւսիս դաշտաձև տափարակ տեղ մը կայ , որուն համար կըսուի թէ Գակիկ արծրունւոյ ժամանակ Ստանու քաղաքը հոս եղած է որ մինչեւ ցայսօր շատ մը աւերակներու տեղեր կերեւնան : Իսկ ամրոցիս արեւելեան կողմը մէկ սրբատաշ քարէ շինուած կամարակապ սրբոյն Սարգոսի զօրավարին անուամբ եկեղեցի մը կայ , որ այժմ նոյն գաւառի Քուրթաց ձեռքն է . կ'ըսեն թէ Գագիկ Արծրունւոյ մարմինը այս եկեղեցւոյն մէջ թաղուած է . ամրոցիս ստորտը վորիկ գիւղ մը կայ որուն անունը Ստանայ թաղիկ կըսուի . որուն բնակիչը 15 տան հազիւ կը հասնի , որոնցմէ 4 տուն շայ աղգ են մնացալեները Վիւրտ . գիւղիս դէպի արեւելքը 20 քաղաչափ հեռու Ստանայ գետին եզերք սրբատաշ և զարմանալի ձարտարութեամբ քերթուած մահմետական սող գմբէթ մը կայ , որուն բարձրութիւնը 50 կանգունի կ'հասնի . իւր բոլորակքը ունի 44 մանր և խոշոր լուսամուտներ . լուսամուտներու ձակատը քարէն քանդակուած ծաղիկներով զարդարուած է . ամէն մէկ ծաղիկներու վերի ծայրը փոքր խաչանշաններ կան եթէ մարդ մը խորին նկատողութեամբ շնայի կարող չէ սա խաչանքանները սրաշէլ . գմբէթիս կէսէն վայր հողի մէջ թաղուած է և սկորնելով լեցուած է : Կըսուի թէ այս Գմբէթը Գագիկ Արծրունւոյ շէնքն է . և իւր անունն ալ Սուրբ Յարութիւն կըսուի : Եամանակին մեծ երեւելի բազմամարդ վանք մը եղած է , որուն մէջ 300էն աւելի կեղերակամք

կ'ընակին եղեր, կ'ըսեն թէ թաթարաց արշաւանքին ատեն թաթարներ այս վանքի բարտախք եղած շէնքը քանդելով, միայն Վմբէթն ալ այն յիշեալ շէնքերու քարու կիրերու մէջ մնալով կէսէն աւելի թազուած է. իրաւի այս զարմանալի շէնքը զինքը տեսնողներուն զարմանք կը շարժէ. վերջապէս իբրև միաձուլ արձան մը հայոց այն ամենագեղեցիկ Ռստան գաւառի ստորոտ կեցած իւր տխուր դէմքով ճանապարհէն անցողներուն սիրտը առ ինքն կը գրաւէ: Վիւզիս Արեւմտեան կողմը մեծ ահագին կոնաձեւ քարանձաւ մը կայ. քարանձաւիս հիմը մինչեւ ծովու խորութեան յատակը հասած է: Քարանձաւի գօտիէն սակաւ ինչ վեր փորուած է, և Վադա ամրոցի հիմը այն քարանձաւին մէջ դնելով մինչեւ բլրակին հասուցած են: Իսկ ամրոցը բարձրօրէն աւերակ եղած է. միայն թէ քանի մը բուրգերու ու պալատներու աւերակները կանգուն կեցած են:



Ա Ր Կ Ա Տ Ք

Ա Ր Ի Ս Թ Ո Ն Յ Ի Ի Ս Ի Ն

(Շարունակութիւն, աւս թիւ 1):

«Քաջ գիտեմ որ, բաւ ինձ անիկայ, Յրկրիս վրայ մէկը չկայ որ բազդին գառնութեանը չըհանդիպի իրեն կենաց մէջ, որքան որ մեծ կըլլայ անոր պարգեւած յաջողութիւնը, այն համեմատութեամբ ալ անոր ի վերջոյ հասուցած աղետից ծանրութենէն երկրն չելու իրաւացի պատճառներ մարդ կունենայ. ուստի ես որ այսքան տարիներէ ի վեր անոր բարիքները կը վայելեմ, գիտեմ որ ինձ կը մնայ նաեւ

սոսկալի աղետից յորդու թիւն մը, և թէ այս կէտէս չըջանամ առաջն առնուլ շողորորթ բազդին մատնութեցոյ: Այս խօսքերն ըսելով իւր մատեն խիտ թանկագին մատանին հանեց, զոր ստատիկ ալ կրտրէր, և իմ ներկայութեանս աշտարակի մը բարձրութենէն ծովուն մէջ ձգեց զայն, յուսալով թէ այս կորստեամբը գոնէ իրեն կենաց մէջ միանգամ բազդին դառնութեանց նշաւակ եղած կըլլայ, բայց այս կուրուցութիւն մ'էր, որ իրեն յաջողութենէն պատճառեցաւ. աղետք կամ չարիք չեն անոնք՝ զորս մարդ ինքնին գիտութեամբ իրեն կը պատճառէ և կամ կընտրէ, այլ անոնք են չարիք՝ որք անակնունելի և բռնադատեալ զօրութեամբ կը հասնին աւտոնց վրայ, զորս Ատուածք պատուհասել կուզեն: Փոյլիկրատ չէր գիտէր թէ բազդին անցթու թեանց առաջն առնելու միտի և ճշմարիտ միջոցը՝ իմաստութեամբ և չափաւորութեամբ աւտոտուած սետի և ունայն պարգեներէն ետ քաշու իլն է:

Բողոքը՝ որուն ուզած էր զոհել իւր մատանին, չ'ընդունեց այս նուէրը, և Փոյլիկրատ իրեն կամաց հակառակ տւելի երջանիկ գտնուեցաւ, քան յառաջ: Չուկ մը՝ կըլլած ըլլալով այս մատանին, Փոյլիկրատի մարդիկներէն բռնուցեաւ և անոր տունը տարուելով, խոհարարը անոր արգանդին մէջ գտաւ մատանին և անմիջապէս բռնաւորին տարաւ որ տեսնելով զայն շատ տրամեցաւ բազդին՝ իրեն յաջողելու այնքան յամառելուն համար, բայց ժամանակը կը մերձենար՝ ուր անոր բարձր յաջողութիւնքը, յանկարծ սոսկալի ճախորդութեանց պիտի փոխուէին: Պարսկից դարիւս մեծ թագաւորը Յունաց դէմ սրատեւազ մի ելաւ. և իսկոյն Վրից ծովը գեր սց և

անոր մերձակայ կղզեաց յայն գաղթա-  
կանները նուածելով, Մամոս կղզին ալ  
տուաւ և բանաւորը յաղթուեցաւ .  
(Օրոնթ՝ որ մեծ թագաւորին կողմա-  
նէ կը հրամայէր, բարձր խաչ մը կանգ-  
նել տողով բանաւորը անոր վրայ սպան-  
նեց : Այսպէս ահա այն մարդը՝ որ այն-  
քան հիացուցիչ յաջողութիւն մը վա-  
յելած էր և որ շէր կրցած երբէք  
թշուառութեան ինչ բլրայլ գիանալ,  
զոր ինքն անձամբ որոնած էր, մեռա-  
տանջանաց ամենէն սոսկալի տեսակով :

Այսպէս ահա մարդուն ոչինչ այն-  
քան չըսարտունար որքան որ մեծ յաջո-  
ղութիւնը, սրուն կը հետեւի մեծ դժ-  
բաղդութիւն : Այս բաղդը՝ որ այն-  
չափ անգթաբար կը ծաղկէ ամենէն  
երեւելի մարդիկները, կը քաշէ կը հա-  
նէ միանգամայն ամենաթշուառ մար-  
դիկները փոշուոյ մէջէն : Ազգիպիկրա-  
տրն փառաց անւոյ բարձրութեն գա-  
հափիժելով, զիս քաշեց հեռացուց իմ  
ամենաթշուառ վիճակէս, ինձ մեծ  
հարստութիւն և ճօխութիւն տալու  
համար : Պարսիկները զանոնք ինձմէ  
չը բարձին, և ընդ հակառակն իմ մար-  
դիկներ բժշկելու դիտութեանս վրայ  
մեծ համարմունք ցոյց տուին, և չա-  
փաւորութեանս վրայ հիացան, որով  
ապրած էի բանաւորին քով եղած ժամա-  
նակս անոնք՝ որ անոր վտառնութենէն  
ղեղձուած էին և անոր իշխանութե-  
նէն յղիացած զանազան տանջանքնե-  
րով պատժուեցան :

Արովհետեւ մէկու մը շարութիւն  
ըրած չէի, և ընդ հակառակն ձեռքէ-  
եկամին չափ բարիք ըրեր էի, ուստի  
յաղթականք ինձ միայն խնայեցին և  
պատուով վարուեցան ինձ հետ : Ամեն  
մարդ ասոր վրայ ուրախացաւ, որով  
հետեւ ամենուն սիրելի էի ես, և ես  
սոց յաջողութիւնը առանց ուրիշին  
նախանձը գրգռելու կը վայելէի . քան-

Ե

զի ոչ խառութիւն, ոչ ամբարտաւա-  
նութիւն ոչ ազահութիւն և ոչ ա-  
նիրաւութիւն, ցուցած չէի երբէք  
իմ վրայ :

Քանի մը տարի ալ բաւական հան-  
գարտութեամբ Մամոս կղզին մնացի,  
բաց վերջնապէս սաստիկ իղձ մը զգա-  
ցի ապա Վիտի բաղաքը վերստին տես-  
նելու, ուր տեղ այնքան քաղցրութիւն  
մանկութիւնս անցուցեր էի : Այս սեղ-  
կը յուսայի Վրինը գանել, որ զիս սը-  
նուցած և որ իմ բաղդաւորութեան  
ալ տառաջին դատաւան էր : Այս քա-  
ղաքը հասնելով, իմացայ որ Վրինը  
իւր ստացուածքը կորսնցնելէն և իւր  
ծերութեան թշուառութիւնները մեծ  
տրտութեամբ կրեղին զինի մեռած է :  
Անոր մտրոց վրայ ծաղիկներ և ար-  
տասուք թափելու գնացի և շիրմին վը-  
րայ ալ յարգական մակագրութիւն  
մը գնելով, հարցուցի թէ իւր սրդիքը  
ինչ եղեր են, ինձ ըսին որ անոր որ-  
դիներէն մէկը միայն մնացած էր (Օր-  
սիլըք անուն, և այն ալ չը կրնալով  
իւր հայրենեաց մէջ անշուք և աննը-  
չան կեանք մը վարելու հանդուրժել .  
ուր իրեն հայրը այնքան պերճութեամբ  
փայլած էր, օտարական նաւու մը մէջ  
մտած ծախուն որ և իցէ կղզու մը  
մէջ անշուք կեանք մը վարելու գնա-  
ցած էր : Ասոր վրայ ինձ յաւերցուցին  
թէ այն Օրսիլըքն ալ գարբաթի կըղ-  
զայն առջեւ նաւարեկութեան պա-  
տահած էր, և այսպէս իմ բարերար  
Վրինի ընտանիքէն ոչ որ մնացած էր :  
Իսկայն մտածեցի անոր բնակած տա-  
լը գնել և նաեւ այն բարեբեր դաշ-  
տերը կամ անդերը զոր ունէր շրջա-  
կայից մէջ :

Այս վայրերը վերստին տեսնելու  
չափազանց ուրախ էի, վասն զի ինձ  
կը յիշեցնէին այնպիսի սիրուն հասա-  
կի մը և այնպիսի բարի տիրաջ մը

5

քաղցր յիշատակը : Ինձ այնպէս կ'էր  
բեւեռ թէ տակաւին այն ծաղիկ հա-  
տակիս մէջ էի , ուր Ալբինին ծառա-  
յած էի :

Հազիւ թէ իրեն ժառանգութե-  
ինչքերը իւր սիրտատէրներէն գնեցի  
և աստ Ալազամէն ստիպուեցայ գնալ ,  
որովհետեւ հայրս Փոլիսթրաթ եւ  
մայրս Յիսուի մեռած էին : Այլապե-  
ներ ունէի , որոնք ՚ի միասին ըստ չէին  
ապրեր : Ալազամէն հասնելուս պէսանոնց  
ներկայացայ պարզ հագուստով մը ,  
ինչքերէ զուրկ մարդու մը նման : Այրը  
զիս տեսան շատ զարմանք ցոյց տուին  
մտածելով որ այսպէս իրենց հօրը Փո-  
լիսթրաթին ժառանգներուն թիւը  
կաւեղնար . որովհէտ պիտի ստիպուէին  
անոր փոքր ժառանգութիւնն ալ այն  
համեմատութիւնբաժանելուստի կամե-  
ցան իմ ճնուեցս ուրանալ և դատա-  
ւորաց առջեւ մերժեցին զիս ճանաչե-  
լու : Այն ժամանակ ես ալ անոնց այս  
տմարդութիւնը սրտով չէի համար .  
յայտնեցի որ ես կը հաւանիմ իրենց  
համար անձանօթ ըլլալ . այն պայմա-  
նաւ որ իրենք ալ իմ ժառանգներս  
ըլլալէ բոլորովն դադրին :

(Պիտի շարձանիւթ) :

ՈՍԻՐԲ ՓՐԿՉԻ ՎԱՆԲ

ՅԵՐՈՍԼԱՅ

Վենետիկ Ս . զազարու վանքը տը  
պագրուած մեծ աշխարհագրութեան  
մէջ անգագուշութեամբ սխալելով Ա-  
րուսաղէմի մէջ Ս . Փրկչի վանքն Նու-  
նաց վանք բռուած է : Այս սխալը Ա-  
րուսաղէմի մէջ Ազգիս համար ծանր  
հետեւութիւն կրնայ ունենալ ապա-  
գայ ժամանակներու մէջ . որուն ա-  
ռաջն առնելու համար Սիօնի միջոցաւ  
հրապարակաւ կը ծանուցանեմք նոյն

աշխարհագրութեան այս կէտին մէջ  
ունեցած սխալը : Այս Ս . Փրկչի վա-  
նաց Հայոց Ազգիս բլալուն վրայ Ա-  
րուսաղէմի ստորագրութեանց և Հան-  
նէ վարդապետի սատմութեանը մէջ  
ընդարձակ խօսուած է : Այսին զատ  
1200 տարիէն աւելի հինօրեայ հրո-  
վարականերով ալ կը հաստատուի Ա-  
րուսաղէմի մէջ Ս . Փրկչի վանքն Հա-  
յոց Ազգին Ակեղեցին եւ մտտուն  
ըլլալը :

Սոյն վանքի ստորագրութիւնն 1859  
ին Վանացս Տարանը տպագրուած  
Արուսաղէմի Ստորագրութիւնն առ-  
նելով կը գնեմք նաեւ Սիօնի մէջ ՚ի  
գրտութիւն հասարակաց :

### ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱՆԱԿՈՂ ՄԱՆ ԳԵՂԱՔԻՍ ՍՐԲՈՅ  
ԵՐՈՍԼԱՅԻՄ

Յաշարհս սոյրք Փրկչի վանաց Բրոյ :

Այլեւ ընդ դուռն Գաթի , զոր  
Փրկչի դուռն կոչեմք , և է ՚ի հարա-  
ակողմն քաղաքիս Արուսաղէմի : Հան-  
դէպ դրանն է ուր քրկչի վանքն մեր ,  
և է բարձրարեւմ պարսպու , և միով  
երկաթի դրամք անբացեալ . որ ունի  
առ հիւսիս , և մտանէ ընդ հարաւ :  
Ի մտանելի ՚ի ներս չորս աստիճանաւ  
լջանէ ՚ի գաւիթն . որոյ երկայնութիւն  
է 30 տունաչափ , և լայնութիւնն 24 .  
և երեք աստիճանաւ ելանէ ՚ի դուռն  
Ակեղեցեցոյն , ՚ի ձախմէ ՚ի յետուստ  
դրանն են գերեզմանք հանգուցեալ  
Պատրիարքաց :

Աւագ խորանի վէմն է իսկ կայսու-  
րիչ Վէմ կենսատու սրբոյ Գերեզմա-  
նին Քրիստոսի , որ յատուկ պարգեւ  
իմն շնորհեալ է Ազգիս մերում ՚ի

Տեառնէ . որոյ երեքին կողմանքն բայ են և տեսանին , որ հոգւոյ փափոքաւ նօք համբուրեալ պատուի ՚ի մէջ ՚ի հաւատացելոցս , յորոյ վերայ և կատարի ահաւոր խորհուրդ սուրբ Պատարագին :

Ի ձախմէ Մտք խորանին է Արկորդք բանան Մրիտտութի , որ է յոյժ նեղ և անձուկ փորրագոյն մատուռ մի , և ՚ի նմա սեղան Պատարագամատոյց : Այլ ՚ի յետուստ Աւագ սեղանոյն է պահարան՝ և սեղան մի , և յարեւմտեան յանկիւն եկեղեցւոյն է յատուկ պահարան մի եւս . և եկեղեցին է պայծառ , պաակերազորդ և հրաշակերտ հոգեհոգ և վայելչապեղ : Սա է տուն կոյիտիայ քահանայապետին . զի ՚ի տանէ Աննա քահանայապետին ածաւ Փրկիչն մեր աստ . և ժողեալ ՚ի բանտ , ապրակեցաւ և ձագեցաւ , զի ծածկէին զերեսս նորա և տանջէին . հարցանէին զնա և ասէին , մարգարեաց՝ « Մէլ է որ եհարն գրեզ » . Մարի . ԽԶ . 57 . 75 : Սարի . ԺԳ . 53 . 72 Յէ . ԺԸ . 24 . 27 :

Աստ Պետրոս երկուսուրոցաւ ընդ Տէրն , ոչ գիտեմ զնա՝ և ոչ ճանաչեմ ասելով : Աղ . ԽԲ . 51 : Աստ կապեցին զարարչագործ Փրկիչն մեր Յիսուս ՚ի քարեայ սիւնն . և ուժգին հարկանէին զնա : Այլ ՚ի մէջ գաւթին առ արեւելք գոյ խորան մի , յանուն սուրբ Չարչարանաց , որոյ բեմն և սեղանն է կձեայ , ՚ի ներքոյ նորին ևս է կձեայ քանդակածոյ քարամբք յորինեալ , և ՚ի հարաւ կուսէ երկաթեայ ձաղիւ և դրամբ ամրացեալ :

Յարեւմտակողմն ՚ի յետուստ երկաթի դրան է սենեակ մի , սկսեալ մինչ ՚ի հարաւային անկիւնն են երեքին կամարք , յորոյ վերայ են սենեակք վեց : Իսկ ՚ի հարաւակողմն գաւթին երեքին կամարքն են գերեզմանք

Պատրիարքաց . և ՚ի ներքս արեւելեան կամարին են կրկին սենեակք , և կրկին ջրհորք , և չորեքին կամարք եւս գնն : Այլ է քարեայ սանդուխ մի , ընդ որ ելանէ քսաներկու աստիճանաւ ՚ի վեր , յորում են երեքին սենեակք , որոց առաջինն առ հարաւ և առ արեւմուտա երկաթեայ ձաղիւ գեղեցկացեալ . սոքա ամենեքեան ՚ի հիմունց նորոգ շինեցան յաւուրս Տ . Արևիկոսի Արքազան Պատրիարքի , յամի Տեառն 1849 .

Արարաց սուրբ Փրկչի վանուցս ՚ի հիւսիսակողմն է պարտեզ և ձիթատան մեր , յարեւմտակողմն է գերեզմանատունն մեր . և ՚ի մէջ մերոյս է Ատինացն , բայց յատուկ և անխառն , որ ունի նշան ցածագոյն որմն , այլ գիտելն է զի ՚ի թիւ Հայոց՝ ՌՄԻԶ , Յուլիսի 26 . Համա՝ օղլու Աէհմէտ փաշայն եկն և չրջէր ՚ի սուրբ Վաղարքա Արուստղէմ . և ՚ի սոյն ամսոյն 29 Յուլիսի . յաւուր շարաթու բազում կաշառ ընկալեալ ՚ի ձեռաց Ատինաց , վասն որոյ զմեր սուրբ Փրկչի գերեզմանատան մասն յափշտակեալ ՚ի մէջ ետ նոյս , յորում նախ քան զայն շերտի գերեզման Ատինաց անդ : Ի հարաւաւ կողմն ՚ի մէջ մերոյս գերեզմանատանն է փոքրիկ տեղն մի , որ պատեալ կայ ցած և անշունք որմով . որ է գերեզման սրբոյ վկային Բագոսի . զորմէ գրին ՚ի վարս սրբոց , ԺԲ . Էպոբ , յերես 74 : Յայսմուր . Ռեիլեթերի 15 և 18 :

Բագոս արեղայ էր՝ ասէ , ՚ի կողմանց Արուստղէմի ՚ի ժամանակս կրատանդիայ՝ և մօրն ետինեայ : Սոքա եւթմըն եղգարք էին , հայր և մայր սոցա դարձան յայլազգութիւն . ՚ի մեռանել հօրն՝ մայր մանկանցն սւտոյց նոցա անդրէն զքրիտոննեութիւնն՝ նա այսինքն Բագոս չոգու ՚ի վանս սրբոյն Սաբայի , կրօնաւորեալ միրոնեցաւ աստ :

նեւութեան, և կոչեցաւ Վարդա-  
նա մկրտեաց զհնգեամին եղբարս իւր,  
իսկ վեցերորդն՝ որ մնաց յայլազգու-  
թեան՝ որ կոչէր Վահակ կամ Վերառ՝  
մատնեաց զՎագաս, զոր կալեալ այլա-  
զգեաց գանիւք և թշնամանօք տարան  
առ Ամիրան, որ և ետ ապրտակել զնա,  
իսկ նա ասէր՝ Ալէլուիա, և յետ բա-  
զում խոշտանգանաց՝ հատին զգլուխ  
նորա, զոր բարձեալ քրիստանէից՝ թա-  
ղեցին զնա հանդէպ սրբոյն Աստիկ  
սուրբ Փրկչի վանուցս, և սուրբ տեղ-  
ւոյն ննջման սրբուհւոյ Ալուսին յարե-  
մոսից կուսէ: Վայց ՚ի քրիստանէից ոչ  
ոք մտանէ ընդ այն, բանզի ՚ի ձեռս  
այլազգեաց է, և մտանէ ըն վտանգա-  
ւոր:

Այլ ՚ի հարաւախողմն գերեզմանա-  
տանն մեր է գերեզմանատունն ազգին  
Անգղիացւոց, զոր յամի Տեառն 1826,  
գնեցին անդ ազարակ մի, և կանդ-  
նեցին շուրջանակի պարիսպ, և միով  
դրամբ ամրացուցին, որոյ երկայնու-  
թիւնն 36 քայլ, և լայնու թիւնն 25:

Ի մէջ գերեզմանատան հասնոց և  
սրբոյն Աիօնի է Տուն և Տեղի ննջման  
սրբոյ Ալուսին, յորում եկաց յետ համ-  
բառնալոյն Վրիստասի ամս չորեքա-  
սան, աստ էր յառաջագոյն վանք, և  
է յարեւմտակողմն սրբոյն Աիօնի իբր 20  
քայլ հեռի ՚ի նմանէ, և մինչև ցայ-  
սօր մնացեալ են քարեղէն նշանք խա-  
չի ՚ի յորմն, որք պատուին ՚ի մէնջ:

Ոմանք ասեն՝ թէ աստեղև Ակիզ-  
բլն նիւթական եկեղեցւոյ. յորում  
գումարեալ լինէր զնիւտորեալ եկեղե-  
ցին Վրիստասի ՚ի յազօթոս. իսկ այլք  
թէ ՚ի Աերնատանն եղև սկիզբն, և  
ինձ հաւանական թուի այս, այսինքն  
Վերնատունն:

Յետ ննջման սրբոյ Ալուսին մինչ  
Առաքեալք բարձեալ գագաղաւ ըզ-  
մարմին Տիրամօրն տանէին ՚ի Գեթե-

սէմանի. ընդ սուսջ ելին անօրէն Հի-  
րէայք, և Վարուհին Վոսնիս ձգեալ  
զձեռն իւր ՚ի դագաղն, կամէր յեր-  
կիր արկանել. անդէն և անդ գօտա-  
ցեալ չորացաւ ձեռն նորա, և այստե-  
ղի է յարեալ սուրբ Փրկչի վանուց  
յանկիւնն ազարակին, ուր կայր հատոր  
մի քարեայ սիւնն, զոր բարձեալ ՚ի  
մէնջ եզաւ առնթեր մերցս աստի-  
ճանաց սանդխոյն, ընդ օրով երանէ  
յարտային հրապարակն սուրբ Փրկչի  
չի վանուց մերոց:

Աստիկ Աւագ գումնէ հայի ՚ի հիւ-  
սիս՝ և ՚ի Փրկչի վանքն, որ 13 քայլ  
հեռի ՚ի դրանէ աստի գոյ ջրհօր մի  
ուր Առաքեալք արկեալ վիճակս յետ  
համբառնալոյն Վրիստասի, գնացին  
յիւրաքանչիւր աշխարհս. « Այլ ել-  
եալ քարոզեցին ընդ ամենայն երկիր  
տեառն գործակցութեամբ ». Սուրբ.  
Ժ. Զ. Գ. 1. Ի. Գ. 47:

ԵՆՄԱՆԵԿԵԳՐԵԿԵՆԻ

— Յունկար ամսոյ Աիօնիս հրատա-  
րակուած Անգղիոյ Արտաքին գործոց  
պաշտօնատուէնն առ Սրբազան Պա-  
տրիարքն ուղղուած նամակին ծանու-  
ցած նկարագիր երեք պատկերներն  
ոյսինքն Վիքթորիա թագուհւոյն և  
իւր ամուսնոյն Քոնստորգ իշխանին և  
թագածառանգ Կրոյի իշխանին: Այն  
հասան ՚ի Ս. Աթոռս ամբողջ: Ար-  
դէն հասարակութիւնը գլխէ որ. ե-  
րեք տարի յառաջ Հապէշտոանի մէջ  
գանուած Անգղիացի բանտարկելոց  
ազատութեանն համար Հայոց Վար-  
դապետի մը ՚ի Հապէշտոան երթա-  
լով և համար Վրիստանական կառա-  
վարութեան կամքը եւս կը յայտնուէր  
կրկին նամակներով առ Ս. Պատրիար-  
քըն Արուսագէմի և առ Ս. Պատրի-

Գարրին Ա. Պօլսոյ : և Ս. Աւետիսյան միաբանութենէն այս ճանապարհորդութեանն համար որոշուեցան Վեր : Սահակ Աբբեպիսկոպոս : և Աբժ : Տիմոթէոս Վարդապետ : որոնք երկամեայ պանդխտութեամբ ամեն տեսակ տառապանոց տանելով Ազգիս բողոքով լարական պարտաւորութիւնն առհղօք տէրութիւնն Սեփն Բրիտանաց ամենայն յօժարութեամբ կատարեցին :

Այս յօժարակամ պարտակատարութեան արժանիքը քաջ ճանաչեց Ն. Վահագնաւորութիւնն Վիկթորիա թագուհի : և փութաց արժանապէս վարձատրել Ազգիս առ Բրիտանական միացեալ Տէրութիւնն ունեցած համարմանն արտայայտութիւնը՝ այն երեք նկարները խրկելով Ն. Վ. Աթոս որ յախտնական պիտի մնայ անջինջ յիշատակ :

Որուն համար միաբանութեանն ունեցած խորին շնորհակալութիւնն յայտնելու համար արժանի բառեր գողցես դժուար է գտնել :

Վերջին ատեններս Հռովմայ մէջ եղած հռովմական Ապիսկոպոսներէ գումարեալ ժողովին նկատմամբ տեղի ունեցած երեւելի դէպքեր , Ա. Պօլսոյ ըագիրներէն առնելով կը գընեմք Սիփն մէջ պատմական յիշատակութեանց համար : Արոց մէկը պատահած է Ատրեաց գաւառի Յոյն Աթոքիկներու ընդհանուր Ս. Պատրիարքին և Ս. Պապին մէջ տեղը . որուն մէջ կը յայտնուի մէկուն իւր Աքգային եկեղեցւոյ առանձին իրաւունքները պաշտպանելու արիական նպատակը . և գիմացինին այլոց իրաւունքն իրեն ձեռաց տակն ամիրտիւրու անգղայ ճիւղը . որ չնկատէր երբէք թէ արդի ժողովուրդը դիւրութեամբ չը

խաբուիր իւր իրաւունքն ուրիշին անցնելու : Իրեն համար խրատ չեղաւ Հայ Աթոքիկներու մէջ տեղի ունեցած դէպքերը . որոնք իրենց Արիւղեցւոյ առանձին իրաւունքներն Հաստնանի ձեռամբ կորսուած անսնունն անմիջապէս ետքը սկսան վրէտըսել իրենց իրաւունքը . երբ ասան որ չը վերագառնար , զՀաստնանն անգամ մերժեցին , սը պիտի մնայ Ս. Պապի հետ նորա ըրած դռնիքը :

Երկրորդն ալ Վեննայի և Հունգարացւոց Եպիսկոպոսներուն կողմէնէ առ Ս. Պապն ուղղուած նամակ մ'է անսխալականութեւ սկզբան դէմէ :

4 Վեպրէլ . Ա. Պօլսո :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐ

ՊԱՊ ԵՒ ԿԱԹՈՒԻԿ ՅՈՒՆԱՅ  
ՊԱՏՐԻԱՐԿ (1)

Հոսով գտնուող ազգարար մէկուն կողմէն Ամստրայի թայմը անուելագրոյն հետեւեալ կելպով գրուած է :

Կիպուածի մը նկարագրութիւնը պիտի ընեմ Չեղի , ափկայ թէ և սմանց զարմանք ալ պատճառէ , բայց հանրութեան համար բողոքովն ուղիղ պատահար մ'է : Յիշեալ պատմութիւնը Չեղ ընել ուղեւս : պատճառը սա է որ . ըստ իս Աթոքիկանի մէջ հրամայողներուն ճշմարտապէս ինչ գաղտփարի տէր ըլլալուն հետ մէկ տեղ ուշադրութեան արժանի կէտ մ'ալ կ'առնուի :

«Շատ բացայայտ բան մ'է որ Հռովմի մէջ բաւական արեւելեան Ապիսկոպոսներ ժողուած կամ գտնը

(1) Մանուէլ Կոմար 1149 :

ւած է : Հռովմի ժողովարանը զօրութիւնը մէկտեղ կեդրոնացնելու համար , իւր անդդաց հոգւոյն մղում աւելում ուղղափառ (կամ հին) Արեւելեաց վերայիչեալ փոխանորդաց ձեռքէն այնչափ տարիներէ ՚ի վեր անեղծ մնացած շատ մը պինդ խտրութիւնները յարկաւորութեան վերայ է :

Առաջի աւուր Ապիսկոսոսաց խրատութեանց և իրաւանց համար պատկանեալ թղթոյն վոյց խորհրդակցութիւն ըլլալով , կաթողիկէ Յունաց պատրիարքն եւս յիշեալ խորհրդակցութեան հաղորդակցած է :

Յիշեալ պատրիարքն արարելէն լեզուաւ ատենաբանելով լատիններէնի թարգմանուած և գաղղիացի Ապիսկոսոսի մը կողմէն կարդացուած է , նիւթըն ալ սա հետեւեալ կերպովն է :

Նորին պատրիարքութիւնն իշխանութիւնը մէկ տեղ կեդրոնացնել յիմարութիւն և տկարութիւն ըլլալը յայտնելուն հետ մէկ տեղ , հին օրինաց սովորութիւնն ու ազատութիւնը կարգադրութեան մէջ ըլլալով աննայ բռնաբարութիւնն պատճառաւ յառաջ գալիք պակասութեանց սատարիկ կարեւորութիւն մը տուած է :

Յիշեալ խօսուածքը պատմութեան մէջ յիշուող ժողովուրդեան Ապիսկոսոսի մը խօսքն էր . որն որ ամեն բան իշխանութեան տակ առնել ջանացող անձի մը (Պապին) անկարգ և անկանոն շարժելուն իւր հոգեւոր հարց կողմէն իրօթէսմթօ կ'ընէր :

Նոյն երեկոյն յիշեալ Պատրիարքը Պապին առջեւ բերուեցաւ , բայց յառաջագոյն իրեն իմացուցած էին իւր վարդապետներէն և ոչ մէկուն իրեն հետ չ'գտնուիլը և առանձին միայն դալը :

Պապին յառաջն եղած ատենը , հոն նորին պապութեան և Սուրբ Արեւոսաղէմի Աթոսաց Պատրիարք Սոնիներօր Ալեքիսիոսէն զատ մէկը չ'տեսաւ :

Պապը սաստիկ բարկութեամբ մը յանդիմանած է զՎերադարձի Պատրիարքը . յիշեալ իտալացի աստիճանաւար Սոնիներօրի միջոցաւ , և այսչափով ալ չ'բաւականանալով աւելի եւս յառաջ մղած է իւր բարկութիւն :

Պապը յիշեալ Պատրիարքին հրամայած է որ պատրաստի կեցող երկու թուղթերէն մէկը ստորագրէ , այս թղթերուն մէկովը Ալեքիսիոս պատրիարքը կամ բոլորովին իւր ըսածներուն համար մեղաց պիտի գոչէր . և կամ մէկալ թուղթը ստորագրելով իւր եկեղեցւոյ Հռովմի իրաւասութեան անկասութեան համար անկորուստ պահել , և կամ չահել , ուղած սեփհական խտրութիւններն պիտի թողուր : Իսեղծ մարդը յանկարծական կէտի մը դալուն , իւր վարդապետաց հետ խորհրդակցելու համար երկու օր միջոց ուղեց , սակայն խնդրուած միջոցը իրեն չ'տրուելէն զատ իրեն իմացուցին ալ որ , առանց երկու թուղթերէն մին ստորագրելու իւր տունը պիտի չ'երթայ :

Աստի իսեղծ պատրիարքը յիշեալ իրաւունքները թողու համար ստորագրեց : Նա քեզի մարգ մը , որորժողոփոյն մէջ իւր խօսելու իրաւունքը ՚ի գործ դնելով , Պապին քմայր անյարմար աներկիւղ և համարձակ կերպով խօսելուն , թէ պատիւը կորսած է , և թէ ետ աւ ետ տարուած նորին պապութեան գիտութեամբը :



Ահաւասիկ գերմանիոյ քանի մ, ե պիտի ուզուաներու առ Ս. Պատն ուղղած թղթոյն օրինակը, զոր Սասախէն առ ներալ կը դնէմք հոս :

«Ահաւասիկ Ալեկնայի արքիպիսկոպոսկարգինալ Սոսիսէրի և ուրիշ Վերմանացի եւ Հունգարացի եպիսկոպոսոց կողմէն անխաղաղութեան ըսկղբունքին դէմ առ Ս. Պատն մատուցուած ուղերձը, զոր մեր երեքշաբթի աւուր թղթով յիշած էինք :»

Սրբազնատուրը հայր :

Տպեալ թուղթ մը ձեռքերնիս անցաւ, որ Մոզհանրական ժողովոյ հարց ստորագրութեան ներկայացեալ ուղերձի մը բնագիրը կը պարունակէ : Այն ուղերձը կը հրաւիրէ զժողովն, որպէս զի հաճի Հոռովմայ Քահանայապետին իւր առաքելական զօրութեամբ աշխարհի հաւատացեցոց համար ՚ի հաւատոյս և ՚ի բարի վարս վճիռ տալու գերագոյն եւ հետեւաբար ա նոխակալ իշխանութիւնը վաւերացը նել : Անշուշտ գարմանք կը պատճառ տեսնել որ հաւատոյ վարդապետները դատը լեւէ առաջ կը հրաւիրուին որ արուելիք վճռոյն նկատմամբ իրենց ստորագրութեամբ կնքեալ յայտարարութիւն մը հրատարակեն : Բայց այսպիսի կարեւոր գործի մը մէջ խորհեցանք թէ պէտք է առ ձեզ գիւ մենք : Սրբազնատուրը հայր, որ ՚ի Քրիստոսէ ոչխորքն ու գառնքն արածելու սրաշտօնը ընդունած ըլլալով, Տեառն մերոյ արեամբ դնեալ հոգւոց ջերմեռանդ խնամքն ունիք, և ձեր հայրական գորովանօք անոնց սպառնացող վտանգները կը մտածէք :

Անցաւ այն ժամանակներն երբ Առաքելական աթոռոյ իրաւունքը կառկածի ենթարկող կաթողիկոսներ կը դրու նուէին : Չկայ կաթողիկոս մը որ չ'ձան

չէ թէ Մոզհանրական ժողով մը չը կրնար առանց Ս. Պետրոսի յաջորդին տիեզերական եկեղեցին ներկայացնել ամենն ալ ամենամեծ փութով կը հընազանդին Ս. Աթոռոյ հրամանաց :

Այլէ դատ Տրիդենտեան ժողովն ալ բարեմիտ հաւատացեցոց Հոռովմական քահանայապետին իշխանութեան վրայ ունենալիք դաւանութիւնը ուրոշած է :

Այնպէս նաև Քիորէնցայի ժողովին այս կէտիս վրայ առած վճիռը պէտք է որ թէ իր լուծեան և թէ իր մասնաւոր յօդուածոց մէջ պահպանուի . քանզի Առաին և Յոյն եկեղեցեաց երկուստեք համաձայնութեան արգասիքն է . և եթէ Տէրն մեր արժանի համարի իւր գթութեան աչքն այնչափ չարեաց ներքեւ հեծող Արեւելից վրայ դարձնել, այն վճիռը վերանորոգելի միութե հիմն պիտի ըլլայ :

Հարկ կը համարինք յաւելուլ թէ ներկայ փութովիս մէջ եկեղեցին նոր պատերազմ մը պիտի մղէ այն անձանց դէմ որ կրօնի դէմ կը մարանչին, իրքեւ մարդկային սեռին փաստակար բանի մը . պատերազմ մը որ անցեալ դարուց մէջ երբէք լուծած չ'էր . այնպէս որ յարմար չ'լծուիր Տրիդենտեան հարց հրատարակածէն աւելի վարդապետութիւններ տալ կաթողիկոսացոց, որք արդէն լարուած այնչափ որոպայթն երէն փորձութեան մէջ կրնան իյնալ :

Անցաւ որ, ինչպէս ըսած է Պէլորմինոս (\*) բոլոր կաթողիկոս եկեղեցոց հետ, « հաւատոյ սահմանները գլխաւորապէս առաքելական աւանդութիւններ և Այլեղեցոց հաւանութեան կախումն ունին » և տիեզերական ժողով մը համօրէն եկեղեցոց զգացումը ձանկելու ամեննէն կարճ ձանքան է .

(\*) Հոռովմայ որ կաթողիկոս ստուածարան մը :

բայց և այնպէս, ամենատրտազան մտ-  
 զովէն, զոր առարեւանները ձերերուն  
 հետ գուժարեցին Արաւոսդէմայ մէջ,  
 մինչև Այիկիոյ ժողովը, մասնաւոր եկե-  
 ղեցեաց մէջ մուտ գատած անթիւ մու-  
 լրութիւններ պատժուեցան ու շիջան  
 Ս. Պետրոսի յաջորդաց վճիռներովը,  
 սրոյ համօրէն եկեղեցին՝ հաւանութի  
 սուտաւ : Տարակից չիոյ որ ամեն բա-  
 րեպաշտ քրիստոնեաց պարտաւոր են՝  
 ճշմարտագէտ հնազանդիլ առարեւա-  
 կան՝ ամթուսին վճառը : Ասկէց զատ,  
 ներհուն և բարեպաշտ անձինք կ'ու-  
 սուցանեն թէ ինչ որ գերադոյն քա-  
 հանայապետը կը վճուէ 'ի գահոյից՝  
 հաւատոյ և վարուց վերաբերեալ ի-  
 րաց վրոյ, անխժտելի է, մինչև անգամ  
 եթէ եկեղեցեաց հաւանութիւնը որ  
 և է կերպիւ յայտնուած չըլլայ :

Սակայն ներելի չէ լուծի անց-  
 նիլ, որ մեծ դժուարութիւններ ալ .  
 կան յառաջ եկած եկեղեցւոյ հարց  
 խօսքերէն ու գործերէն՝ որք պատ-  
 մութեան վաւերական յիշատակարան-  
 ներուն մէջ գրուած են, եւ նոյն իսկ  
 կաթողիկ վարդապետութեանն : Այն-  
 չեւ որ այն դժուարութիւնները չը  
 լուծուին, անհնար կըլլայ վերայիշեալ  
 ուղերձին մէջ ջատագովեալ վարդա-  
 պետութիւնը ժողովրդոց առաջարկել  
 իբրև Աստուծոյ յայտնաբեր Վայց մեր  
 խելքը կրնիլի այսպիսի վիճարանու-  
 թեանց առջև, սուտի ձեր բարեւոր-  
 աութեանը վրտահեւիլ կողաշինք որ  
 այդ անսակ որոշումներ բնելու չ'հար-  
 կագրեք զմեզ : Ասկէց զատ, որովհե-  
 տեւ մեք մեծամեծ կաթողիկ ազգաց  
 քով եպիսկոպոսական որոշոն կը վա-  
 րենք, անոնց մէջ կեցած վիճակը հա-  
 նապաղօրեաց գործածութեամբ գի-  
 տենք և կը ճանչենք :

Արդ, աներկբայելի է մեզ համար,

որ խնդրուած որոշումը նոր զէնք կը  
 մատակարարէ կրօնի թշնամեաց՝ կա-  
 թողիկ եկեղեցւոյ գէմ գրքագելու  
 նոյն իսկ լաւագոյն ճանչուած մարդոց  
 ատելութիւնը, և հաւաստի ենք որ  
 այդ բանը, գտնէ Աւրոպիոյ մէջ, մեծ  
 երկիրներու կառավարութեանց պատ-  
 ճառ կամ պատրուակ մը կուտայ եկե-  
 ղեցոյն ձեռքը գեո մնացած իրաւունք-  
 ներն ալ գրաւելու :

Այս բաները ձեր սրբութեան ներ-  
 կոյացուցինք այն անկեղծութեամբ՝  
 զոր կը պարտիմք ս.ս. հասարակոց հայ-  
 րն հաւատացելոց, և կաղաչենք որ  
 հրաման բնէք, որ այդ վարդապետ-  
 ութիւնը, որոյ վաւերացումը կ'ուզեն,  
 ինդհանրական ժողովոյն վիճարանու-  
 թեանը չը ներկայացուի :

Սորոսի գրութիւնք

Վանասպէս եւս վերջին լուրերով  
 կը լսենք թէ Հոռովի մէջ Ս. Պատին  
 կողմանէ նոյն առաջարկութիւնն եւ-  
 ղեր է Ասորոց կաթողիկներու եպիս-  
 կոպոսին ալ ինչ որ առաջարկուեցաւ  
 Այլ-բիթի Պատրիարքին, սակայն այս  
 երկուքն ալ բանագատութեամբ Պա-  
 պին կամեցողութիւնն ստորագրելէ  
 վերջը իրենց հրաժարականը սուտ  
 են : Ըստ որում՝ իրենց ժողովուրդն  
 արդէն իրենց (Պատրիարքներուն) խօ-  
 սելքը վաւերացուցած էին յառաջ  
 ուրնէ թէ այս ինչ կէտերու վրոյ այս  
 ինչ կերպ եթէ չխօսին իրենց պատ-  
 րիարքութիւնը պիտի չընդունին :  
 Ինչպէս Վանասկոսի լրագիրն ալ հը-  
 բասարակեց եպիսկոպոսական ժողովի  
 որոշումը :

Քաղաքի և Լ. արք. աղա :  
Քեհնաձեան Որդի Ե Ֆեյնի ( 2 օրի . ) •  
Քեհնաձեան Կնոջ ք աղա :  
Քեհնաձեան Զոհաննես աղա Կեսարացի •  
Քեհնաձեան մահտեի Կարապետ աղա :  
Քրտաձեան Զարուժիկ աղա :  
Քուշազըզեան մահտեի Զակար աղա •  
Քոյաննես Զոհաննես աղա :  
Օտարաշի մահտեի Պետրոս աղա :  
Փրեկեան Զակար Ե Ֆեյնի Կեսարացի . ( 2 օրի . ) •

**ՀԱՅՓԱ**

Գարիբեան Ստեփան աղա Անյի :

**ՀԻՆ ՆԱԽԻԶԵԻԱՆ**

Արժ. Մեարդը վարդապետ Սմբատեանց :

**ՀՆԴԿԱՍՍԱՆ**

Արժ. Ներսէս Ճ. վարդապետ .

Պ. Մալխաս Մալխասեան :

**ՂԱՐԱԲԱՂ**

Արժ. Արիստակէս վարդապետ Սեդրակեան :

**ՄԱՂԱՐԱ**

Արտվրէեան Զովակիմ աղա :

Պիծակեան մահտեի Զոհաննես աղա :

**ՄԱՐԱՀ**

Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժատան, Նուէր ի Մեծ .  
Զակարեան աղայի որ Աղէքսանդրիս :  
Ճանաչեան մահտեի Սարգիս աղա :

**ՄԱՐԶՈՒԱՆ**

Գեր. Զոհաննես Արքեպիսկոպոս Եղեանեան :

**ՅՈՊՊԵ**

Արժ. Աթանաս վարդապետ տեսուչ :  
" Բարդուղիմէոս վարդապետ :  
Ս. Մուրատեան Սիմեոն աղա :

**ՆԻԿՈՄԻԴԻԱ**

Գեր. Նիկողոս Արքեպիսկոպոս առաջնորդական  
փոխանորդ :  
Թանգարան վերձանութեան Նիկոմիդիոյ :  
Տէր Կարապետեան Մկրտիչ աղա :  
Տէր Մինասեան Եղիա աղա :

**ՇԱՊԻՆԱՐԱՀԻՍԱՐ**

Գեր. Աբրահամ Արքեպիսկոպոս :

**ՈՒՆԻԱ ( ԶԵՅՈՒՆ )**

Սուրբ Զոհաննես եկեղեցւոյ վարժատան . Նուէր  
ի Մեծ . Զակարեան աղայի որ Աղէքսանդրիս :  
Սուրբ Զակար եկեղեցւոյ վարժատան , Նուէր ի Մեծ .  
մահտեի Նազարէթ աղայի Ս. Գաբրիէլեան :  
Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժատան, Նուէր ի  
Մեծ . մահտեի Նազարէթ աղայի Ս. Գաբրիէլեան :  
Սուրբ Աստուածամբն եկեղեցւոյ վարժատան :  
Սուրբ Սարգիս եկեղեցւոյ վարժատան :

**ՉԱՆԱԳԳԱԼԵ**

Թագմաս աղա Զակարեան :

**ՊԱՂՏԱՏ**

Խակետեան մահտեի Խաչիկ աղա :  
Խակետեան մահտեի Խակետեա աղա :

**ՊԵՐՈՒԹ**

Արժ. Մեարդի վարդապետ տեսուչ :  
Մեծ . Պողոս աղա Վիլենեան :

**ՉՈՒՂԱՅ**

Խաչակիր Տ. Մինաս Բ. քահանայ .

**ՌԱՆԳՈՒՆ**

Պողոսեան Խաչիկ աղա .  
Պաղտասարեան Կարապետ աղա :  
Մ. Մանուկեան Սարգիս աղա .

**ՍԵՐԱՍՏԻԱ**

Արժ. Պետրոս վարդապետ :  
Ահարոն ( մահտեի ) աղա :  
Աշոտեան Մահտեի Բարէլ աղա :  
Տ. Թեոդորոսեանց մահտեի Մարտիրոս աղա :

**ՍԵՒԵՐԵԿ**

Արժ. Եփրեմ վարդապետ Եղեանիցի :  
Եղուպեան Սարգիս աղա :  
Ենի գոնչեան Մարգար աղա Անյի :  
ԻՋՄԵՆԵԱՆ ԳԵՏՐՈՍ ԱՂԱ ՄԵՏԵՆՅԵՒ • ԳՅՐԾԱԿԱԼ  
ՍԻՕՆԻ •

Սանտրգ Էմինի Կիրակոս աղա :

**ՍԻՆԿԱՓՈՒՐ**

Պ. Բարսեղ Զովակիմեան :  
Պ. Գեորգ Անդրէասեան :  
Պ. Խաչիկ Մովսէսեան :

**ՍՂԵՐՏ**

Մահտեի Խաչայէլ աղա վարժապետ :

**ՎԱՆ**

Արժ. Զոհաննես վարդապետ Լճատունեանց :  
Առաքելեանց մահտեի Մարտիրոսեան Մարգար աղա :  
Խաչատուրեանց մահտեի Մկրտիչ աղա :  
Նաթանեան մահտեի Համբարձում աղա :  
Պշէօեանց Գեորգ աղա :

**ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ**

Գեր. Զակար Արքազան Արքեպիսկոպոս :  
Գուրամ ձեանց Օջան աղա Զամթեցի :  
Թիւֆեկեանեան Մկրտիչ աղա Զամթեցի :  
Ճանաչեան Առաքէլ աղա :  
Մեծ • ՅԱՎՈՎԱ ԱՂԱ ՄԻԹԵՎԷԼԼԻՒ Ս • ԵՐՈՍԱՂԵՄԻ  
ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ •  
Մինասեան Զոհաննես աղա :  
Պաղազ մահտեի Օջան աղա :  
Տէր Գրիգորեան մահտեի Կարապետ աղա :  
Տէր Զակարեան Վարդան աղա Զամթեցի :

**ՏՐԱՊԷԶՈՆ**

Բարենամբաւ Լ. զպրոցն :  
" Մեարդիբեան զպրոցն Կեմիւշխանեի •  
" Դպրոցն Կիրասոնի •  
Գասպարեան Զակար աղա :  
Գրիգորեան Նիկողոս աղա :  
Խաչարեան Վարդան աղա :  
Կիւղչեկեան Կարապետ աղա :  
Կիւրճիեան Պողոս աղա :  
Մախոսեան Արիստակէս աղա :  
Մեռնորեան ՍԱՐԴԵԱ ԱՂԱ • ԳՅՐԾԱԿԱԼ ՍԻՕՆԻ •  
Մինասեան Զոհաննես աղա :  
Զակարեան մահտեի Ստեփան աղա :  
Ս. Մեղաւորեան Խաչիկ աղա :

**ՓԱՐԻԶ**

Երամեան Գեորգ Պէյ . ( 5 օրի . ) •  
Թիւրպեան Գեորգ աղա :  
Զակարեան Մարգար աղա :

**ՔԻԼԻՍ**

Զակար աղա Անյի . ( 2 օրինակ ) :  
Պարամեան Կարապետ աղա . ( 2 օրինակ ) :  
Պրամանեան Գեորգ աղա :

**ՔԻՇՆԵԻ**

Արժ. Գրիգոր վարդապետ տէր Ստեփաննոսեան :

# ՑՆԵԿ

## Փ Ե Տ Ր Վ Ա Ր

Կրօնականք . ( Հերոսոմի հիմնական պարբերականն ) . . . . .	25-30
Գաստիարակուլթեան վրայ . . . . .	30-36
Ստորագրուլթիւն Հայկաձոր և Սասանի գաւառայ . . . . .	36-40
Արկածք Արիսթօնօիւսի . . . . .	40-42
Սուրբ Փրկչի վանք Այրուսաղէմ . . . . .	42-41
ԺԱՄԱՆԱԿԱՐԱԿԱՆՔ . . . . .	44-49

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը անէս ամիս կը հրատարակուի 24 էրեսէ բաղկացեալ ութամսլ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Գէճիսիկ հանդերձ ճանապարհի ծախքովը, կանխիկ վճարելի :
- Գ. Չառ տեսարակ առնել ազողը, պէտք է ամեն մէկ տետրին շքա հեկան վճարէ :